



Գ Լ Ո Ր Ո Ւ Մ

Վ Ե Ր Լ Ո Ւ Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՀ. ԱՌԱՋԸՆԹԱՅԻ ՆԱԽԱԴԲԱԼՆԵՐ
ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՀՈԼՈՔՈՍՏԻ ՄԱՍԻՆ
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ

10

Հունիս, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հանդիպումներ «Նորավանքում»	3
ՀՀ. առաջընթացի նախադրյալներ և հիմնախնդիրներ	6
Курды строят огромную армию	9
Մերձավորարևելյան զարգացումներ. իրավիճակային վերլուծություն	11
Իրանահայ համայնք. ճամպուրկային տրամադրություններ	15
Конфликт с Ираном	19
Բաշար Ալ-Ասադը՝ Սիրիայի վերընտրված նախագահ	25
ՅԱԴ ՎԱՇԵՄ Հոլոքոստի մասին հիշողությունն Իսրայելում	28
Сотрудничество в водной сфере как ресурс регионального добрососедства.....	39
ՄԱԿ. «Միջազգային միգրացիա, փախստականներ և ներքին տեղահանվածներ»	45

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ «ՆՈՐԱՎԱՆՔՈՒՄ»

«Ինթերնեշնլ Քրայզիզ Գրուփի» վերլուծաբանների այցը

Ս.թ. հունիսի 5-ին «Նորավանք» ԳԿՀ էին այցելել կազմակերպության կովկասյան հարցերով ավագ վերլուծաբան Քլեր Դելեսարը (*Claire Delessard*) և վերլուծաբան Լևոն Զուրաբյանը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին տարածաշրջանային խնդիրներ, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող հարցեր:

Մասնավորապես Դելեսարին հետաքրքրում էր հայ փորձագիտական շրջանակների կարծիքը վերջին վեց ամիսների ընթացքում ղարաբաղյան գործընթացի և դրա նշանակության, ինչպես նաև գործընթացի ռազմավարական հաշվեկշռի հնարավոր փոփոխման վերաբերյալ՝ կապված Ադրբեջանի տնտեսության մեջ նավթադուլարների լուրջ ներհոսքի հետ:

Մեր կողմից նշվեց, որ բանակցությունները միշտ անհրաժեշտ են, չնայած դրանցում սկզբունքային կամ էական փոփոխությունները շատ չեն, փոխարենը՝ առկա են մարտավարական փոփոխություններ: Նշվեց, որ, իրոք, նավթային դուլարները և Ադրբեջանի ռազմական ծախսերն ավելացել են, և որ Հարավային Կովկասում ընթանում է սպառազինությունների մրցավազք: Նշվեց նաև, որ ադրբեջանական հասարակության մեջ Հայաստանի նկատմամբ ձևավորվել են արմատական բացասական տրամադրություններ: Ասվածի ապացույցն է այն, որ վերջերս Միլի Մեջլիսում կարծիք էր հնչել այն մասին, թե անհրաժեշտ է Ադրբեջանի և Հայաստանի միջև պատ կառուցել: Այդ համատեքստում պետք է կարևորել Թուրքիայի գործոնը, որտեղ վերջին տարում Թուրքիայում հակահայկական ուղղվածությամբ 117 գիրք է հրատարակվել: Մինչդեռ Հայաստանում հասարակական տրամադրվածությունն ավելի խաղաղասիրական-պացիֆիստական է:

Իր հերթին, Դելեսարը կարծիք հայտնեց, որ Ադրբեջանի այն հայտարարությունը, թե երկրի ռազմական ծախսերը հասցվելու են \$1 մլրդ-ի, այնքան էլ իրատեսական չէ: Այս հայտարարությունն ավելի շատ միջազգային հանրության և ադրբեջանական հասարակության համար է: Դելեսարի համոզմամբ՝ Ադրբեջանն ավելի շատ ցանկանում է հանդես գալ ուժային դիրքերից: Միևնույն ժամանակ, հստակ չէ, թե այդ գումարը տեղ հասնելու է, թե՞ ոչ և կամ ո՞ւմ գրպանն է մտնելու: Նա նշեց, որ առկա սպառազինությունների մրցավազքը խաղաղության երաշխիք է, և որ Ադրբեջանի ու Հայաստանի միջև պատերազմ կսկսվի միայն այն դեպքում, եթե ռազմական հավասարակշռությունը խախտվի: (Նկատենք, որ այս խնդրի նկատմամբ նման մոտեցում էր ցուցաբերում նաև վերջերս Երևան ժամանած Արիֆ Յունուսովը, այսինքն՝ չի կարելի բացառել, որ նման պատասխանն ընդհանուր մոտեցման արդյունք է):

Ազատագրված տարածքների մասին Դելեսարի հարցին ի պատասխան նշվեց, որ դրանք Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի անվտանգության ու կայունության երաշխիքներ են: Իսկ խաղաղապահ ուժերի տեղակայման հարցում արտահայտվեց մեր բացասական մոտեցումը՝ վկայակոչելով այլ հակամարտությունների գոտիներում խաղաղապահների հետ կապված անհաջողությունները:

Դելեսարին հետաքրքրեց մեր դիտարկումը բիզնեսի ոլորտում հայ և ադրբեջանցի գործարարների շփումների մասին, ինչի ապացույցն ադրբեջանական ապրանքների առկայությունն է հայաստանյան շուկայում, և հակառակը: Նշվեց նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում տնտեսական գործոնն առանձին դեպքերում ավելի կարևոր է, քան, ասենք, միջնորդական առաքելությունները կամ քաղաքական այլևայլ նախաձեռնությունները:

Դելեսարին հետաքրքրում էր Ադրբեջանում իսլամի դերը: Ի պատասխան նշվեց, որ Ղարաբաղյան պատերազմին մասնակցել են վահաբական մոջահիդները: Սակայն այսօր Ադրբեջանի արմատական շրջանակները, մասնավորապես՝ վահաբականները, ղարաբաղյան

հոետորականությանը չեն դիմում՝ հիմնականում շեշտադրելով հասարակության մեջ իսլամական սկզբունքների ներդրման ու սոցիալական խնդիրներին վերաբերող հարցերի վրա: Իշխանություններին ձեռնտու չէ, որպեսզի իսլամական արմատական կառույցները խոսեն դարաբաղյան խնդրի մասին, քանի որ այդպիսով վերջիններս կդառնան առավել անվերահսկելի:

Քլեր Դելեսարին հետաքրքրում էր նաև «Նորավանքի» փորձագետների կանխատեսումը Հայաստանի և Ադրբեջանի հնարավոր պատերազմի մասին: Նշվեց, որ պատերազմի վերսկսման հնարավորությունն այնքան էլ իրատեսական չէ:

Տեղեկանք

«*International Crisis Group*»-ը շահույթ չհետապնդող միջազգային կազմակերպություն է, որն աշխարհի տարբեր կետերում ունի ավելի քան 130 աշխատակից: Կազմակերպության առաքելությունն աշխարհի տարբեր հատվածներում առկա հակամարտությունների ու ճգնաժամերի հաղթահարմանն ու կանխմանն ուղղված հետազոտությունների անցկացումն է, ինչը պետք է ծառայի նշված հակամարտությունների և ճգնաժամերի հանգուցալուծմանը միտված գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

Կազմակերպության մեթոդաբանությունը հիմնվում է դաշտային հետազոտությունների վրա: Կազմակերպությունը հրատարակում է «*CrisisWatch*» ամենամսյա տեղեկագիր, որը ներկայացնում է հակամարտության և հնարավոր հակամարտության գոտիներում իրադրության վերջին զարգացումների ու փոփոխությունների նկարագիրն ըստ կազմակերպության աշխատակիցների ընկալման:

Կազմակերպության խորհրդի կազմում կան քաղաքական գործիչներ, դիվանագետներ, գործարարներ և ԶԼՄ ներկայացուցիչներ: Կենտրոնական գրասենյակը տեղակայված է Բրյուսելում, իսկ ներկայացուցչությունները գործում են Վաշինգտոնում, Նյու Յորքում, Լոնդոնում և Մոսկվայում: Բացի այդ, կազմակերպությունն ունի 13 տարածաշրջանային գրասենյակներ՝ Ամանում, Բիշքեկում, Բոգոտայում, Կահիրեում, Դակարում, Դուշանբեում, Իսլամաբադում, Զակարտայում, Քաբուլում, Նայրոբիում, Պրիշտինայում, Սեուլում և Թբիլիսիում:

Ղարաբաղյան հակամարտության մասով «Ինթերնեշնլ Քրայզիզ Գրուփի» գործունեության հետ կապված՝ հարկ է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ժամանակին՝ 2005թ. վերջ-2006թ. սկիզբ, նաև այս կազմակերպությունն էր ընտրված որպես կիսպաշտոնական մակարդակով նոր բնույթի տեղեկատվության արտանետման աղբյուր: Հիշեցնենք, որ ԶԼՄ-ի կողմից հասկապես մեծ ուշադրություն էր դարձվում կազմակերպության ներկայացուցիչ Սաբինա Ֆրեյզերի՝ Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային գործընթացում նոր տարրերի ի հայտ գալու վերաբերյալ հայտարարություններին: Այդ հանգամանքը բավարար հիմք է ենթադրելու, որ «Ինթերնեշնլ Քրայզիզ Գրուփի» գործառույթների մեջ հատուկ տեղ է գրավում անհրաժեշտ պահին բրիտանա-ամերիկյան դիվանագիտության օգտին տեղեկատվական ճնշում բանեցնելը:

«Նորավանք» այցելած ֆրանսուհի *Քլեր Դելեսարը* բավական լավ գիտեր ռուսերեն, սովորել և աշխատել էր Իրկուտսկում և Թբիլիսիում, ԼՂՀ հիմնախնդիրների վերաբերյալ խոր գիտելիքներ չունեւր:

Ուկրաինայի դեսպանության առաջին խորհրդական Վլադիմիր Գուլիմայի այցը

Ս.թ. հունիսի 8-ին իր նախաձեռնությամբ «Նորավանք» հիմնադրամ էր այցելել ՀՀ-ում Ուկրաինայի դեսպանության առաջին խորհրդական Վլադիմիր Գուլիման: «Նորավանք» հիմնադրամից հանդիպմանը ներկա էին տնօրեն Գ.Հարությունյանը, փոխտնօրեն Ս.Սարուխանյանը, փորձագետ Ա.Փաշայանը:

Վ.Գուլիման նշեց, որ իրենք շփումներ ունեն Հայաստանի տարբեր վերլուծական կենտրոնների և դրանց ղեկավարների, մասնավորապես՝ Բ.Հովհաննիսյանի և Գ.Նովիկովայի հետ, և որ իրազեկ են վերլուծական դաշտի թե՛ պաշտոնական, թե՛ ընդդիմադիր տեսակետներին: Այս առումով նա կարևորեց համագործակցությունը նաև «Նորավանք» հիմնադրամի հետ:

Վ.Գուլիմային հետաքրքրում էին մի քանի հարցեր՝ կապված Ազգային ժողովի նիստին ընդդիմադիր երկու ուժերի՝ «Օրինաց երկրի» և «Ժառանգության» պատգամավորների բացակայության, Ղարաբաղյան հիմնախնդրի, ՎՈԻԱՄ-ի նկատմամբ Հայաստանում առկա որոշակիորեն բացասական դիրքորոշման և տարածաշրջանային այլ խնդիրների հետ:

Գ.Հարությունյանը ներկայացրեց վերոնշյալ խնդիրների մասին իր դիտարկումները: Իր հերթին, Վ.Գուլիման համառոտ ներկայացրեց Ուկրաինայում տիրող իրավիճակը, Ուկրաինայի արտաքին քաղաքականությանն առնչվող խնդիրները (մասնավորապես՝ ռուս-ուկրաինական հարաբերությունները), Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում ի հայտ եկած խնդիրները: Նա նշեց, որ Ուկրաինայում մեծ հարված է հասցվել գիտության ոլորտին, մեծ թվով ինտելեկտուալներ պարբերաբար արտագաղթում են երկրից, փոխարենը՝ իրենց դիրքերն են ամրապնդում ցածր ինտելեկտ ունեցողները: Նա նշեց, որ արտագաղթի ծրագիր՝ համապատասխան քվոտաներով, կիրառում է նաև Կիևում Գերմանիայի դեսպանությունը: Վ.Գուլիման բացասաբար էր արտահայտվում նաև Ուկրաինայի նկատմամբ Լեհաստանի դիրքորոշման վերաբերյալ:

Վ.Գուլիման խոսեց նաև Ուկրաինայի հայ համայնքի մասին: Նա նշեց, որ ուկրաինական համայնքը կազմված է երկու շերտից՝ հին (Լվովի համայնք) և նոր, որը ձևավորվել է ԽՍՀՄ փլուզումից հետո: Իրենց ունեցած տվյալներով՝ Ուկրաինայում մոտ 500.000 հայ է ապրում: Հայերը հիմնականում բնակվում են Կիևում, Լվովում և Խարկովում: Գուլիման նշեց, որ հայերի մեջ կան աչքի ընկնող դեմքեր, որոնցից են բիզնեսմեն Նվեր Միխիթարյանը (ով Կուլչմային մոտ կանգնած մարդկանցից էր), Փամբուկյանը, Արսեն Ավագովը:

«Նորավանք» - ԱՄՆ Կոնգրեսի գրադարան

«Նորավանք» ԳԿՀ-ն ԱՄՆ դեսպանատան Տեղեկատվական ռեսուրսների կենտրոնի տնօրեն Ներսես Հայրապետյանի միջոցով կապեր է հաստատել ԱՄՆ Կոնգրեսի գրադարանի (մասնավորապես՝ Միջին Արևելքի երկրներով զբաղվող Լոլա Փիքերիգ-Քեյսանի) հետ: Կոնգրեսի գրադարանը «*Duplicate Materials Exchange Program*»՝ «Նույնանուն գրքերի փոխանակման ծրագիր» շրջանակներում գրքերի որոշակի քվոտաներ է տրամադրել «Նորավանքին»: Քաղաքագիտության ոլորտին վերաբերող գրքերն ընտրվում են «Նորավանքի» փորձագետների կողմից:

ՀՀ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրապարակված տարաբնույթ վարկանիշային ցուցակների վերլուծությունից հետևում է, որ Հայաստանը մի շարք կարևորագույն չափանիշներով (կայունության և ինքնիշխանության, տնտեսական ազատականության և ժողովրդավարության) հանդիսանում է մեր տարածաշրջանի առաջատարը: Դա հերթական անգամ հաստատում է այն դրույթը, որ մրցունակ լինելու գլխավոր նախապայմանը ոչ թե բնական պաշարներն են կամ աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքը, այլ առաջին հերթին քաղաքակրթական մշակույթը և այդ մշակույթը կրող մարդկային ռեսուրսները: Վերջինիս կարողության չափանիշ են հանդիսանում *ստեղծագործ ընտրանու* (համաձայն Առնոլդ Թոյնբիի եզրաբանության) կողմից ձևավորվող հայեցակարգերն ու ազգային նախագծերը և, իհարկե, դրանք գործնականում իրականացնելու կարողությունը:

Նկատենք, սակայն, որ տարածաշրջանային առաջատարի կարգավիճակը *դեռևս բավարար չէ հայ քաղաքական և ստեղծագործ ընտրանու* համար, և նման հավակնոտությունն ընդունելի է և արդարացված: Վերոհիշյալ միջազգային կազմակերպությունների գնահատականներից հետևում է նաև, որ հանրապետությունում դեռևս քիչ չեն հիմնախնդիրները, որոնք էլ ընդգծում են մեր ոչ այնքան շահեկան դիրքերը համաշխարհային հարթությունում:

Ելնելով մարդկային ռեսուրսների կամ մարդկային կապիտալի գործոնը կարևորելու տրամաբանությունից՝ փորձենք գնահատել հայաստանյան որոշ քաղաքական գործընթացներ, որոնց մեջ ներառված են դրական զարգացումների համար անհրաժեշտ նախադրյալները: Նույն քաղաքական տրամաբանությունից ելնելով՝ համառոտ դիտարկենք այն երևույթները, որոնք կարող են խաթարել մեր հետագա առաջընթացը:

Գաղափարախոսական «եռամիասնության» ձևավորման հրատապությունը. Հայտնի է, որ քաղաքական ընտրանու մրցունակությունը ներքին և արտաքին հարթություններում գլխավորապես պայմանավորված է այն գաղափարախոսությունով, որով նա առաջնորդվում է: Այդ համատեքստում նկատենք, որ այսօր «ազատականություն» և «ժողովրդավարություն», ինչպես նաև «ամբողջատիրություն» և «ընկերավարություն» հասկացությունները տարբեր քաղաքակրթական գոտիներում ու երկրներում մեկնաբանվում են ամենատարբեր իմաստներով: Արդյունքում՝ աշխարհում գործում են մոդիֆիկացված կամ այլ խոսքերով՝ *սինթետիկ, հիբրիդային* գաղափարախոսություններ և տնտեսական հայեցակարգեր, որոնք տարբեր համամասնությամբ ազատական, սոցիալիստական (ընկերավարական) և քաղաքակրթական (ազգային) գաղափարներ ու արժեքներ են պարունակում: Անգամ հպանցիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ազգերը և պետությունները, որոնք կարողացել են հաջողությամբ իրականացնել այդ երեք բաղադրիչների ներդաշնակ համակցումը, առավել մեծ հաջողությունների են հասել: Նման երկրներից առավել ուշադրության են արժանի հարուստ քաղաքական ավանդույթներ ունեցող անգլոսաքսոնյան երկրները: «Գաղափարախոսական եռամիասնություն» կարողացել է ձևավորել նաև «նոր» Չինաստանը, որտեղ ներդաշնակորեն համագոյակցում են պահպանողական (ազգային-քաղաքակրթական), սոցիալիստական և ազատական մոտեցումները: Նշված օրինակները թույլ են տալիս պնդել, որ այսօր գլոբալ հարթությունում երկրների մրցունակությունը պայմանավորված է նրանց՝ գաղափարախոսական նման «եռամիասնություն» արտահայտող համակարգ ձևավորելու կարողությամբ:

Վերոնշյալի համատեքստում Հայաստանում Հանրապետական կուսակցության կողմից պահպանողականությունը (որն ազգային գաղափարախոսության՝ «եռամիասնության» քաղաքակրթական-ազգային բաղադրիչն է) կուսակցական գաղափարախոսություն հռչակելը պետք է ընկալել որպես առաջին, բայց կարևոր քայլ ամբողջական և մրցունակ գաղափարախոսական համակարգի ձևավորման ուղղությամբ: Նկատենք նաև, որ պահպանողականու-

թյունը դավանում է շարունակականության գաղափարը, ինչն իր հերթին հանդիսանում է տեղեկատվական անվտանգության հիմնաքարը:

2007թ. կայացած խորհրդարանական ընտրությունները վկայում են այն մասին, որ հանրապետությունում ձևավորվում են նաև ազատական գաղափարախոսություն դավանող կուսակցություններ: Սակայն այս հարցում անհրաժեշտ է որոշակի վերապահումներ անել: Անվիճելի է, որ ազատական գաղափարները, հատկապես տնտեսական ոլորտում, ունիվերսալ բնույթ են կրում, և այդ առումով ցանկացած երկրի ազատական քաղաքական ուժը պետք է համատեղելի լինի գլոբալ հարթությունում ընդունված նորմերին: Սակայն այդտեղից չի հետևում, թե տվյալ երկրի ազատական կուսակցությունների աշխարհաքաղաքական կողմնորոշումները կարող են հետևանք լինել այս կամ այն արտաքին ուժի հետ առկա հատուկ պայմանավորվածությունների կամ նրանց նկատմամբ ունեցած նախասիրությունների: Այլ խոսքերով՝ քաղաքական ուժերի գաղափարախոսական ուղղվածությունը չպետք է հակասի մեր ազգային շահերին: Այդ տեսանկյունից անելիքները դեռ շատ են, և դա վերաբերում է ոչ միայն ազատական գաղափարախոսություն կրող քաղաքական ուժերին:

Արտաքին աշխարհին համարժեք գաղափարախոսական «եռամիասնություն» ձևավորելու նպատակով քաղաքական բարձրագույն ընտրանին, թերևս, պետք ձգտի ստեղծել անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանրապետությունում ձևավորվի նաև սոցիալիստական ուղղվածություն ունեցող կարող քաղաքական ուժ¹: Նման քաղաքական տեխնոլոգիան թույլ կտա ոչ միայն արդյունավետ մշակել ներքին սոցիալական բնույթի խնդիրների լուծման մեխանիզմները, այլև կնպաստի հարաբերությունների զարգացմանն այն երկրների հետ (Չինաստան, ԵՄ պետություններ), որտեղ սոցիալիստական կուսակցությունները կարևոր դերակատարում ունեն:

Ազգային անվտանգության դոկտրինը՝ գաղափարախոսության արտացոլում. Շարունակելով թեման՝ տեղին է հիշել այն ձևակերպումը, ըստ որի՝ ազգային գաղափարախոսությունը Ազգային անվտանգության դոկտրինի խտացրած արտահայտությունն է: Այդ համատեքստում ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության (ԱԱՌ) մշակումն առաջնային կարևորություն է ստանում: Կարևոր է այն հանգամանքը, որ ԱԱՌ ձևավորման աշխատանքներին մասնակցել է հանրապետության փորձագիտական հանրության և քաղաքական-պետական շրջանակների ներկայացուցիչների մի ստվար զանգված, ինչը պետք է գնահատել որպես ազգային նախագծի շուրջ *ստեղծագործ ընտրանուն* համախմբելու փորձ: Հայտնի է, որ փորձագիտական հանրությունում այդ փաստաթղթի առանձին դրույթների վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ, սակայն դա բնականոն երևույթ է: Բոլոր պարագաներում անվիճելի է այն իրողությունը, որ ԱԱՌ ստեղծման արդյունքում ամբողջական պատկերացումներ և մոտեցումներ են ձևակերպվել Հայաստանի ու հայության գործունեության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ: Այդ առումով ԱԱՌ փաստաթուղթը դժվար է գերազնահատել:

Մասնավորապես փաստաթղթում առավել ընդգրկուն են ներկայացված հանրապետության արտաքին քաղաքականության ուղենիշները: Հայտնի է, որ լինելով ոչ մեծ երկիր՝ Հայաստանը, հաշվի առնելով հատկապես ԼՂՀ և ցեղասպանության հետ կապված գործընթացները, իր ուրույն մասնակցությունն ունի գլոբալ քաղաքական զարգացումներում: Ի լրումն, ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Եվրամիության երկրները, Իրանը և Թուրքիան, ելնելով Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական դիրքից, համարում են, որ ՀՀ-ն գտնվում է իրենց ազգային շահերի շրջանակում: Մոտ ապագայում, ամենայն հավանականությամբ, նման մոտեցում կցուցաբերի նաև Չինաստանը: Այդ համատեքստում ԱԱՌ-ում հիմնավորվում են երկու՝ ***փոխընդհանուր և ներգրավվածության*** դոկտրինալ բնույթի սկզբունքները: Նման ռազմավարական մեթոդաբանությունը համարժեք է գլոբալ աշխարհի տրամաբանությանը և տարածաշրջանային իրողություններին: Այն թույլ է տալիս կառուցողական հարաբերություններ

¹ Ինչպես հայտնի է, այսօր ռեալ քաղաքական դաշտում գործող կուսակցություններից սոցիալիստական սկզբունքներ է հռչակում միայն ՀՅԴ-ն: Սակայն այդ կուսակցության «սոցիալիստականությունը» թերևս առաջնային չէ, և թվում է՝ ցանցային կառույցներ ունեցող այդ եզակի քաղաքական կազմակերպության առաքելությունն ավելի շուտ համահայկական ազգային ռեսուրսների համախմբումն է:

հաստատել տարածաշրջանային և գլոբալ աշխարհաքաղաքական դերակատարների հետ՝ պահպանելով միաժամանակ մեր ինքնիշխանությունը, ինչը երաշխիք է ազգ-պետության բնականոն զարգացման համար:

Մեր հիմնախնդիրներից. Ինչպես արդեն նշել ենք, մարդկային ռեսուրսների հարթությունում դեռևս առկա են բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց նկատմամբ դեռևս չեն ձևավորվել կառուցողական և արդյունավետ մոտեցումներ: Դրանցից կառանձնացնենք մտավոր/ինտելեկտուալ ռեսուրսների վերարտադրման հիմնախնդիրը կամ այլ խոսքերով՝ գիտական և տեխնոլոգիական ոլորտի զարգացման խնդիրները:

Գիտության և ընդհանրապես հոգեմտավոր ռեսուրսների հարցերը, համաձայն արդիական պատկերացումների, անմիջականորեն առնչվում են տեղեկատվական անվտանգության ոլորտի խնդիրների հետ: Հարկ է նաև նկատել, որ այս կամ այն երկրի իրական ներուժն առավել հաճախ՝ հատուկ մեթոդաբանության միջոցով, գնահատվում է այն **ընդհանրացված գիտելիքների** չափով, որին տիրապետում է այդ երկրի հանրությունը: Այլ խոսքերով՝ պետության մրցունակությունը պայմանավորված է նրանով, թե որքանով է տվյալ երկրի հանրությունը մոտ **տեղեկատվական հանրության** չափանիշներին: Այս առիթով նկատենք, որ **ընդհանրացված գիտելիքները** կարևոր են ոչ միայն նրանով, որ դրանք տրանսֆորմացվում են բարձր տեխնոլոգիաների և դրանով իսկ բարելավում երկրի տնտեսական-սոցիալական ցուցանիշները: Ոչ պակաս, իսկ գուցե և առաջնային նշանակություն ունի այն հանգամանքը, որ գիտական-տեխնոլոգիական ոլորտն է, որ համալրում է **ստեղծագործ-քաղաքական ընտրանու** շարքերը:

Մինչդեռ պետք է ընդունել, որ և՛ քաղաքական-պետական ընտրանին, և՛ ակադեմիական շրջանակներն առայժմ չեն ներկայացրել որևէ արդյունավետ նախագիծ այդ ոլորտում հանրապետությունում ստեղծված իրադրությունը շտկելու ուղղությամբ:

Հատկանշական է, որ Հայաստանը, հայտնի գործընթացների հետևանքով կորցնելով իր երբեմնի բավական լուրջ գիտատեխնոլոգիական ներուժը, այնուամենայնիվ, կարողացել է ինչ-որ չափով պահպանել ոլորտի կենսունակությունը: Օրինակ, 2004-2006թթ. հայ գիտնականները, ըստ ՀՀ ԳԱԱ տվյալների, հրապարակել են մոտ 800 աշխատանք օտարերկրյա վարկանիշային ամսագրերում, ինչը զգալիորեն գերազանցում է տարածաշրջանի այլ երկրների ցուցանիշները (Վրաստանում՝ 100-ից մի փոքր ավելի, Ադրբեջանում՝ մոտ 30): Այսինքն՝ չնայած անբարենպաստ պայմաններին, հանրությունը կարողացել է պահպանել իր մտավոր ներուժի զգալի մասը:

Ստեղծված իրավիճակի մասնակի փոխհատուցում կարելի է համարել տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտի զարգացման բարձր տեմպերը: Խիստ կարևոր է նաև այն, որ ոլորտի փորձագետները փորձում են նախագծել հետագա զարգացման մոդելները: Համաձայն *Ev Consulting* հայկական ընկերության տվյալների (տե՛ս Մանուկ Հերգնյանի «Հայաստանի SS ոլորտի աճի մոդելը» հետազոտությունը¹) 2010թ. ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից երրորդ երկրներ կտեղափոխվեն մոտ 885.200 աշխատատեղեր, և 2006-2010թթ. SS պատվերների (*outsourcing*) շուկան \$130 մլրդ-ից կաճի \$185 մլրդ-ի: Եվ ելնելով այդ իրողությունից՝ առաջարկվել են 2011թ. Հայաստանում ոլորտի զարգացման երեք մոդելներ, համաձայն որոնց՝ 2011թ. ոլորտի համախառն եկամուտը կկազմի մինչև \$248 մլն, իսկ աշխատակիցների թիվը՝ մինչև 9500, և դա այն պարագայում, երբ արտադրողականությունը կարող է կազմել մինչև \$26000:

Ինչպես տեսնում ենք, այս ոլորտի հեռանկարները լավատեսական են և որ գլխավորն է՝ իրատեսական. բավական է նշել, որ SS ոլորտի աշխատակիցների թվաքանակն արդեն այսօր գերազանցում է «Հայաստան 2020» նախագծում ներկայացված լավատեսական կանխատեսումները: Պետք է հուսալ, որ SS ոլորտում կուտակված փորձագիտական ունակությունները կնպաստեն գիտական և տեխնոլոգիական ողջ ոլորտի առողջացման գործընթացներին:

Գազիկ Տեր-Հարությունյան

¹ Մանուկ Հերգնյան, (*Ev Consulting*) «Հայաստանի SS ոլորտի աճի մոդելը», տե՛ս Գլոբուս #6, www.ev.am; www.noravank.am/?l=1&d=10&f=797

КУРДЫ СТРОЯТ ОГРОМНУЮ АРМИЮ

Курдский фактор становится все более действенным на Ближнем Востоке. Если еще несколько лет назад курды представляли из себя основную боевую повстанческую силу на территории Ирака, Турции, Ирана и Сирии, то теперь они выходят с партизанского уровня на стадию формирования легальных вооруженных сил, которые уже называются одними из самых боеспособных в регионе.

Курдские пешмерга, которые вели в свое время войну против режима Саддама Хусейна, а также турецких вооруженных сил периодически, по согласованию с Багдадом, вторгающихся на территорию Ирака, теперь переживают период легализации. Несмотря на попытки федерального центра подчинить себе курдские отряды самообороны, реальность оказалась другой – курды фактически за счет американцев и иракского центра лишь укрепляют свои силы.

В пригородах Сулеймании действует военная академия пешмерга. Курдистан имеет также собственную службу безопасности «Асаиш», в формировании которой участвовали также и израильские инструкторы.

В целом курдские формирования являются самыми боеспособными в Ираке. Этому способствуют несколько факторов:

- У курдов есть большой опыт партизанской войны с регулярной армией Саддама, насчитывающий десятилетия;
- Курдов на сегодняшний день серьезно поддерживают американские военные, которые даже используют их в операциях против исламистов вне Курдистана, в частности – в Багдаде;
- Отсутствие этнических и религиозных трений внутри пешмерга делает их формирования, в отличие от остальной иракской армии, более однородными;
- Наличие политической и национальной воли на создание курдского государства, к чему стремится вся политическая элита.

О том, насколько дисциплинированы и управляемы пешмерга, можно судить по тому, что в ноябре 2005 года, когда американские войска оказались в тяжелом положении в Мосуле, Барзани удалось в течение часа послать им на помощь порядка 5 тыс. курдских бойцов.

Численность пешмерга тоже является особенной темой. Нет никаких точных источников. Разные источники называют цифру от 60 тыс. до 140 тыс. Ясно, что руководство Курдистана обладает серьезным людским резервом по сравнению с теми пешмерга, которые официально проявляются в ходе каких-то полувоенных мероприятий. В частности, стоит отметить, что часть курдов служит под флагом федеральных войск, не подчиняясь официально руководству Курдистана. Однако ясно, что в случае реальной нужды эти части перейдут под командование курдского руководства.

Однако последние дни внесли некоторую ясность в ситуацию с численностью курдской армии. Информационный портал *Курдистан.ру* 7 июня распространил информацию о переговорах между Курдистаном и иракским центром о финансировании пешмерга. (Несмотря на то, что ранее центр пытался растворить курдский элемент в единой федеральной армии.) Сообщается, что между руководством Сил обороны Курдистана, правительством Ирака и командованием Многонациональных сил имели место переговоры. На этих переговорах правительство Курдистана потребовало определить численность пешмерга, которые состоят на федеральном бюджетном финансировании, в 190 тысяч. По словам министра по делам пешмерга Джабара Явара, со своей стороны центральное правительство утверждает, что для обеспечения спокойствия и безопасности региона, достаточно иметь одного пешмерга на 50 человек населения, что составляет 90 тысяч. Переговоры будут продолжены в этом месяце. По словам Джабара

Явара, президент Ирака Джалал Талабани (один из лидеров курдского освободительного движения) и оба вице-президента подписали указ, согласно которому с 1 января 2007г. финансирование пешмерга ложится на федеральный бюджет. Фактически, курдам удается сформировать огромную армию, а ее финансирование возложить на центр, который, похоже смирился с усилением курдского фактора.

Из появляющейся в прессе информации можно судить, что американцы поддерживают пешмерга не только обучением кадров, но также и тяжелой военной техникой. Известно, что курдам была оставлена часть техники, которая осталась от иракской армии Хусейна. В тоже время точная информация о том, вооружаются ли курды новой американской техникой, отсутствует.

Так, в прессе во время второй иракской кампании появлялись сообщения о том, что курдам удалось захватить в 2003г. вооружения со складов иракской армии в Мосуле и Киркуке (официально американское командование выступало против входа курдских сил в эти города). По некоторым данным, курдам достались сотни единиц тяжелой техники советского производства – танки, БТР и БМП, а также тяжелая артиллерия. Кроме того, в 2004г. в *Washington Times* появилась информация о том, что курды Мосула и Киркука начали бизнес по распродаже на металлолом иракской бронетехники. По данным газеты, курдские скупщики покупали танки за \$800, а истребители – за \$12 тыс. Затем техника перепродавалась в Иран и Турцию. В то же время очевидно, что годная к эксплуатации или ремонту техника могла осесть на складах пешмерга.

Еще в 70-ых годах во время курдо-иракской войны пешмерга имели на своем вооружении не только стрелковое оружие (автоматы Калашникова, ручные и станковые пулеметы советского производства, РПГ и ДШК), гранатометы, зенитные установки (так, за 1974-1975 годы было уничтожено порядка 100 единиц иракской авиации и 150 танков), но и тяжелые минометы (предположительно – американского производства) и артиллерию.

Уже в 1995-1996 годах, когда шла гражданская война между курдскими силами Демократической партии Курдистана и Патриотическим союзом Курдистана, появлялись сообщения о том, что на вооружении у курдов из ПСК есть ракетные установки, ПЗРК, а также танки Т-54 и Т-55.

В целом можно констатировать, что курдские лидеры формируют армию, которая по своей численности превосходит необходимую силу для поддержания порядка внутри самой автономии. Цели очевидны – иметь армию, которая в нужный момент сможет силой поддерживать стремление к созданию независимого Курдистана. При этом ясно, что в своем стремлении к независимости курдские лидеры не ограничиваются лишь современными территориями автономии Курдистана.

Самвел Мартиросян

ՄԵՐԶԱՎՈՐԱՐՆԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2007թ. մայիսի 28-ին Բաղդադում տեղի ունեցած մոտ չորսժամյա բանակցություններ Իրաքում ԱՄՆ դեսպան Ռայան Քրոկերի և նույն երկրում Իրանի դեսպան Հոսեյն Քազեմիի միջև: Թեև, հաղորդագրությունների համաձայն, բանակցությունների հիմնական թեման առնչվում էր միայն իրաքյան խնդրին, սակայն քիչ հավանական է, որ շուրջ 27 տարի դիվանագիտական նման կարգի շփումներ չունեցած և տարածաշրջանում ազդեցությամբ առանձնացող երկու տերությունները սահմանափակվեին սոսկ մեկ երկրին առնչվող օրակարգով:

Մյուս կողմից, հաշվի առնելով 2003-ից ի վեր Մերձավոր Արևելքում ստեղծված իրադրությունն ու ընթացող զարգացումները՝ ամերիկա-իրանական նման կարգի բանակցություններն արդեն իսկ պետք է ընկալել որպես տարածաշրջանային որոշակի հարցերի շուրջ նախնական պայմանավորվածությունների ձեռքբերման արդյունք:

Հիմնական հարցը, որը կարող է ի հայտ գալ նման պայմաններում, տարածաշրջանում ստեղծվող նոր իրավիճակի կառուցվածքին առնչվող հարցն է, քանզի ակնհայտ է դառնում, որ, անկախ արդյունքից, նման բանակցությունների մեկնարկն ինքնին նշանակում է նոր իրավիճակի առաջացում ողջ Մերձավոր Արևելքում:

Որպես տարածաշրջանում իրավիճակի ձևափոխման ցուցիչ է առանձնացվել նոր պայմանավորվածություններին միտված դիվանագիտական նախաձեռնությունների շարքը Մերձավոր Արևելքում:

Մերձավորարևելյան դիվանագիտություն

Իրավիճակի տեղաշարժի առաջին լուրջ նշաններն ի հայտ եկան 2006թ. վերջից-2007թ. սկզբից սաուդյան տարածաշրջանային քաղաքականության համար գուցե անսովոր դիվանագիտական բավական ակտիվ նախաձեռնություններով:

Թեև Լիբանանը համարվել է տարածաշրջանում սաուդական թագավորական տան ազդեցության ընդլայնման ավանդական գոտի և այդ առումով Էր Ռիադի ջանքերն առանձնացել էին հատկապես վերջին մեկուկես տասնամյակում¹, սակայն 2006թ. իսրայելա-լիբանանյան պատերազմից հետո Բեյրութի ուղղությամբ իրականացվող սաուդյան քաղաքականությունն² արդեն դուրս էր գուտ ներլիբանանյան տրամաբանությունից:

Տարածաշրջանում Էր Ռիադի դիվանագիտական ակտիվության երկրորդ կարևոր ուղղությունը դրսևորվեց պաղեստինյան հարցում: 2006թ. հունվարի 25-ին Պաղեստինյան ինքնավարությունում կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանու-

¹ Էր Ռիադի քաղաքականության հաջողությունն է համարվում սաուդյան թագավորական տան հետ սերտ կապեր ունեցող մեծահարուստ Ռաֆիկ Հաբիրիի կողմից 1992-1998թթ. և 2000-2004թթ. լիբանանյան կառավարությունը գլխավորելը: Հիշեցնենք, որ Ռ.Հաբիրին սպանվեց 2005թ. փետրվարի 14-ին Բեյրութում տեղի ունեցած ահաբեկչական գործողության արդյունքում:

² Այդ քաղաքականության, թերևս, ամենավաղ օրինակներից էր Էր Ռիադի հովանավորությունը վայելող և արտաքին քաղաքականության մեջ գլխավորապես արևմտյան կողմնորոշում ունեցող Ֆուադ ա-Սինյորայի կառավարությանը հատկացված մոտ \$1.1 մլրդ օգնությունը, որը տրամադրվեց 2007թ. հունվարի 25-ին Փարիզում կայացած և Լիբանանին նվիրված միջազգային համաժողովի արդյունքում: Օգնության չափի առումով սաուդյանի տրամադրածը զիջում էր միայն Զարգացման և վերակառուցման եվրոպական բանկի հատկացրած գումարին՝ \$1.25 մլրդ:

թյան գլուխ եկած «Համաս» շարժման գործոնը կարճ ժամանակ անց իր արտացոլումը գտավ տարածաշրջանային քաղաքականության մեջ: Եվ այդ առումով ողջ 2006թ. ընթացքում ու 2007թ. սկզբին շարունակվող «Ֆաթհ»-«Համաս» հակամարտությունը նախևառաջ ենթարկվում էր մերձավորարևելյան քաղաքականության տրամաբանությանը:

Այս տարվա փետրվարի 8-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդալլահի անմիջական նախաձեռնությամբ Մեքքայում պաղեստինյան միացյալ կառավարության ստեղծման մասին համաձայնագիր կնքվեց Ինքնավարության նախագահ, «Ֆաթհ» շարժման ղեկավար Մահմուդ Աբասի և «Համասի» ներկայացուցիչներ՝ Ինքնավարության վարչապետ Իսմայիլ Հանիայի ու Կազմակերպության քաղխորհրդի նախագահ Խալեդ Մաշալի միջև: Ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ սաուդյան նշված քայլը, փաստորեն, աջակցություն էր ստացել նաև Դամասկոսում, քանզի Մաշալը, ով ապաստան է գտել Սիրիայում, համարվում է վերջինիս մարդը «Համասում»: Նշվածը հատկապես առանձնանում էր այն պատճառով, որ համաձայնագրի անուղղակի արդյունքը պետք է լիներ պաղեստինյան գործերում Իրանի ազդեցության սահմանափակումը:

Եվ վերջապես, սաուդական նախաձեռնություններից, անշուշտ, պետք է առանձնացնել Սիրիայի արաբական մեկուսացման դեմ ուղղված քայլը և Իսրայելին, փաստորեն, ողջ արաբական աշխարհի կողմից արված հաշտության առաջարկը: Ըստ ամենայնի, այդ նախաձեռնությունները հանդես են եկել փոխկապակցված ձևով, և այդ առումով ամենևին էլ պատահական չէ, որ երկուսն էլ ի հայտ եկան ս.թ. մարտի 28-29-ը Էր Ռիադում կայացած Արաբական պետությունների լիգայի 19-րդ զագաթաժողովի ժամանակ: Այստեղ սաուդյան թագավորը կրկնեց դեռևս 2002թ. հրեական պետությանն իր իսկ արած հաշտության առաջարկը¹, և դա արվեց սաուդա-սիրիական հարաբերություններում, փաստորեն, տեղի ունեցած «ճեղքման» ֆոնին:

Ըստ էության, սիրիական հարցն, ընդհանրապես, հանդես է գալիս որպես մերձավորարևելյան նոր զարգացումների եթե ոչ ամենաառանցքային, ապա ամենակարևոր գործոններից մեկի տեսքով: Իրանա-սիրիական և սաուդա-սիրիական հարաբերություններում նկատվող զարգացումներից զատ, այդ հետևության օգտին են խոսում հատկապես իսրայելա-սիրիական և ամերիկա-սիրիական հարաբերություններում ի հայտ եկած նոր տարրերը:

2007թ. հունվարի 16-ին իսրայելական «Ha'aretz» պարբերականը գրեց, որ 2004թ. սեպտեմբերից ի վեր Թել Ավիվն ու Դամասկոսը գաղտնի բանակցություններ են վարում հաշտության պայմանագիր կնքելու նպատակով, իսկ արդեն մայիսի 24-ին իսրայելական մեկ այլ օրաթերթի՝ «Maariv»-ի հրապարակման համաձայն, օտարերկրյա մի քանի դիվանագետներ ներկայումս զբաղված են Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերթի և Սիրիայի նախագահ Բաշար Ասադի միջև, փաստորեն, բանակցությունների ընդհանուր օրակարգ մշակելով:

Քիչ հավանական է, որ պատահականություն լինի այն հանգամանքը, որ իսրայելա-սիրիական բանակցությունների վերաբերյալ տեղեկատվական արտահոսքերն, ընդհանուր առմամբ, համընկնում ամերիկա-սիրիական հարաբերություններում նկատվող ջերմացման հետ: Դեռևս ս.թ. ապրիլի 3-4-ը ԱՄՆ Ներկայացուցիչների տան խոսնակ Նենսի Փելոսիի Դամասկոս կատարած այցելության առնչությամբ կարծիք էր հայտնվել, թե այդ քայլը վկայում է Սիրիայի նկատմամբ Վաշինգտոնի նոր քաղաքականության մասին: Ենթադրությունն ապացուցվեց մայիսի 3-4-ը եգիպտական Շարմ աշ-Շեյխ հանգստավայրում տեղի ունեցած Իրաքի վերաբերյալ միջազգային համաժողովի շրջանակներում ԱՄՆ ու Սիրիայի արտգործնախարարներ Քոնդոլիզա Ռայսի ու Վալիդ Մուալեմի միջև կայացած հանդիպմամբ: Լրատվական արտահոսքերի համաձայն, ամերիկա-սիրիական բանակցությունների օրակարգի գլխավոր

¹ Խաղաղության և Իսրայելը ճանաչելու փոխարեն առաջարկվում է Գազայի շրջանում և Հորդանան գետի ողջ արևմտյան ափում ստեղծել Պաղեստինյան պետություն՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով, իսկ Իսրայելի սահմանները պետք է համապատասխանեն մինչև 1967թ. պատերազմը եղած իրավիճակին:

թեմաներն են Արևմուտքի կողմից Բաշար Ասադի վարչակարգին տրվող ապահովության երաշխիքները, փոխարենը Դամասկոսից պահանջվում է կայունացնող մոտեցում ցուցաբերել Լիբանանի ու Իրաքի գործերում:

Կասկածից վեր է, որ իսրայելա-սիրիական բանակցություններում տեղ գտած ակտիվությունն առաջին հերթին Դամասկոսի նկատմամբ ամերիկյան նոր մոտեցման արդյունք է:

Մերձավորարևելյան նոր դիվանագիտության հաջորդ կարևոր տարրը Եվրամիության ու Իրանի միջև վերսկսված բանակցություններն են: Այդ բանակցությունները, որոնք իրանական միջուկային զարգացումների համատեքստում Միացյալ Նահանգների ու Իրանի կողմից միշտ էլ դիտարկվել են որպես անուղղակի շփման միջոց, վերջին անգամ ընթացել էին 2007թ. փետրվարի 10-11-ը Մյունխենում կայացած անվտանգության հարցերով միջազգային համաժողովի շրջանակներում:

Եվրոպա-իրանական վերսկսված բանակցությունները մինչ օրս ընթացել են երկու փուլով՝ ապրիլի 25-26-ը Անկարայում և մայիսի 31-ին Մադրիդի մոտ՝ Եվրամիության արտաքին ու անվտանգության քաղաքականության հարցերով հանձնակատար Խավիեր Մոլանայի ու Իրանի ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանիի միջև:

Այդ բանակցությունների վերսկսման փաստը դժվար թե լուրջ ուշադրության արժանաւար, եթե այդ բանակցությունները չշարունակվեին Իրանի միջուկային ծրագրին առնչվող իրավիճակում ԱՄՆ ու եվրոպական կողմի համար ցանկալի որևէ տեղաշարժի բացակայության պայմաններում: Այդ հանգամանքը նկատելի դարձավ հատկապես ապրիլի վերջին-մայիսի սկզբին, երբ վերջնականապես պարզվեց, որ Իրանը մտադիր չէ կատարել 2007թ. մարտի 24-ին ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից ընդունված բանաձևի պահանջները:

Եվ վերջապես, մերձավորարևելյան զարգացումների համատեքստում պետք է առանձնացնել ԱՄՆ-ի ու Իրանի միջև սկսված բանակցությունները, որոնք, ինչպես նշվեց, տեղի ունեցան մայիսի 28-ին Բաղդադում: Հատկապես 2003թ. իրաքյան պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակի ֆոնին Իրանի հետ բանակցությունների գնալը Վաշինգտոնում միշտ էլ դիտարկվել է որպես Թեհրանին զիջման գնալուն հավասար մի քայլ: Եվ այդ առումով անգամ 2006թ. դեկտեմբերի 6-ին հրապարակված Բեյքեր-Համիլթոն խմբի (*«Iraq Study Group»*) հանձնարարականները՝ բանակցությունների գնալ Իրանի ու Սիրիայի հետ, իրականացման տեսանկյունից 2007թ. սկզբին դիտվում էին որպես քիչ հավանական: Հետևաբար, երբ ա.թ. ապրիլի 25-ին ամերիկյան հանրային *PBS* հեռուստաալիքով Բուշ-կրտսերը հայտարարեց, թե Քոնդոլիզա Ռայսին թույլատրվել է բանակցություններ սկսել Թեհրանի հետ, սակայն միայն իրաքյան հարցով, պարզ դարձավ, որ բացվել է ողջ Մերձավոր Արևելքի առնչությամբ պայմանավորվածություններ ձեռք բերելու ամերիկա-իրանական օրակարգը:

Հատկանշական է, որ Իրանի հետ բանակցությունների գնալու գործընթացին ամերիկացիները ձեռնամուխ եղան իրենց դիվանագիտության համար տիպիկ եղանակով: Իրանական կողմի հետ նախ բանակցությունների մեջ մտավ Լոնդոնը. մայիսի 3-4-ը եգիպտական Շարմ աշ-Շեյխ հանգստավայրում կայացած համաժողովի ընթացքում բրիտանական արտգործնախարարության ղեկավար Մարգրեթ Բեքհեթը մոտ կեսժամանոց հանդիպում ունեցավ Իրանի իր գործընկեր Մանուչեհր Մոթաքիի հետ¹:

¹ Չպետք է նաև մոռանալ, որ իրանա-բրիտանական նման կարգի բանակցություններն առաջինն էին իրանցիների կողմից ձեռքբերված բրիտանացի 15 նավաստիների շուրջ ծավալված զարգացումներից (2007թ. մարտի 23-ապրիլի 4) հետո:

Հետևություններ

Մերձավոր Արևելքը մուտք է գործում, թերևս, կարճաժամկետ տևողությամբ մի նոր իրավիճակ, որի հիմնական բնութագրիչներն են.

- ԱՄՆ իրաքյան կամպանիայի ձախողման հետևանքները,
- իրանական ազդեցության աճը տարածաշրջանում,
- Սառը պատերազմի ավարտից հետո տարածաշրջանում ձևավորված ուժերի փոխդասավորվածության ու հաշվարկների տրանսֆորմացիան:

Սկզբունքային նորությունն այն է, որ, ամենայն հավանականությամբ, Վաշինգտոնում որոշում է կայացվել 2007-2008թթ. ընթացքում բացառել Իրանի նկատմամբ ռազմուժի կիրառումը: Առնվազն այդ հետևության օգտին են խոսում գլխավորապես ամերիկյան դիվանագիտության նախաձեռնած մերձավորարևելյան վերոհիշյալ զարգացումները:

Հասկանալի է, որ ներկայացվածի առանցքն են հանդիսանում ամերիկա-իրանական հավանական պայմանավորվածությունները: Մերձավոր Արևելքում ընթացող մյուս բոլոր գործընթացները հարկ է դիտարկել որպես այդ առանցքին միտված գործոններ:

Այդքանով հանդերձ, այս իրավիճակի տևողությունն իրոք որ կարող է սահմանափակվել 2007-2008 թվականներով՝ կապված այն հանգամանքի հետ, որ ամերիկյան քաղաքական ընտրանին 2009թ. դուրս կգա նախընտրական (նախագահական ընտրություններ) իրավիճակից, և այդ դեպքում (չհաշված ընտրությունների արդյունքը) Վաշինգտոնի մերձավորարևելյան քաղաքականության մեջ կարող է գործել այլ տրամաբանություն:

Մարգիտ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ՃԱՄՊՐՈՒԿԱՅԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Գաղթը պատմության ընթացքում ոչ թե բացառություն, այլ օրինաչափություն է եղել: Սակայն միշտ չէ, որ «գնա՞լ, թե՞ մնալ» հարցն այնքան հստակ, պարզ ու անխուսափելի ձևով է դրված եղել մարդու առջև, որքան այսօր դա դրվել է իրանահայի առջև:

Իրանի բնակչությունն ըստ 2006թ. մարդահամարի կազմում է 70 միլիոն 472 հազար 846 մարդ: Բնակչության 99.43%-ը մահմեդական է: Հայերի թիվը հասնում է մոտ 120.000-ի:

Ըստ Թեհրանի Հայոց թեմի Կանոնադրության՝ Իրանի հիմնական և քաղաքացիական օրենքների համաձայն, իրանահայությունը հետևում է երկրի օրենքներին և կրոնական փոքրամասնություն ճանաչվելով՝ ունի կրոնի ազատության, կրոնի, լեզվի և ազգային սովորույթների ուսուցման, խորհրդարանում 2 ներկայացուցիչ ունենալու իրավունք: Իսկ մասնավոր խնդիրներում հետևում է իր կրոնի ու դավանանքի օրենքներին ու ազգային սովորույթներին, որոնց հիման վրա վարում է իր եկեղեցական, կրոնական ու կրթական գործերը՝ համապատասխան ժողովների և մարմինների միջոցով:

Թեհրանի Հայոց թեմը և իր համայնքը կրոնական խնդիրներում հետևում են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին, սովորույթներին ու ավանդույթներին և ենթարկվում են Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հոգևոր բարձր իշխանությանը:

Ս.թ. մայիսի 10-16-ին Թեհրանում տեղի ունեցավ Թեհրանի Հայոց թեմի Պատգամավորական ժողովի տարեկան նստաշրջանը: Քննարկվող առանցքային հարցերից էր իրանահայության շրջանում օրեցօր թափ առնող և տեղի հոգևորականությանն անհանգստացնող արտագաղթի խնդիրը: Նիստի ավարտին թեմի առաջնորդն իր եզրափակիչ խոսքում անդրադարձավ համայնքին հուզող արտագաղթի հարցին. «Գաղթը մեր ժողովրդի կյանքի անբաժանելի մի երևույթ է եղել պատմության ընթացքում, սակայն այս օրերում այն, ինչ կատարվում է այստեղ և մի քիչ էլ ամեն տեղ, դժվար բացատրելի երևույթ է»:

Անկասկած, այսօր արտագաղթն իրանահայերի առաջնակարգ խնդիրն է: Երկիրը թողնելու համար կարծես պատճառաբանության կարիք չկա, ավելին. նա, ով չի պատրաստվում գաղթել, պիտի պատասխանի. թե ինչու է մնում: Կարծես, գնալը բնական է, իսկ մնալը՝ անբնական, լուսաբանման ու բացատրության կարոտ:

Սակայն *որո՞նք են գաղթի պատճառները, արդյո՞ք գաղթի ճանապարհը բռնած իրանահայերը պարզ ու հստակ պատկերացում ունեն իրենց ապագա բնակավայրի մասին, գիտե՞ն ինչով պիտի զբաղվեն նոր երկրում, ինչպե՞ս պիտի հաց վաստակեն այնտեղ* հարցերն այդպես էլ մնում են անպատասխան: Իսկ ամենակարևորն այն է, թե ինչ են նրանք մտածում նոր միջավայրում ազգային ինքնության պահպանման հնարավորությունների և անհրաժեշտության մասին: Այս հարցադրումներով «Յոյս» երկշաբաթաթերթը դիմել էր երիտասարդ և միջին տարիքի, զանազան մասնագիտությունների տեր, երկու սեռի պատկանող 15 իրանահայերի, որոնք պատրաստվում են մեկնել Իրանից (հիմնականում ԱՄՆ):

Ներկայացնում ենք հարցերը և դրանց տրված պատասխանները՝ մեր մեկնաբանություններով և ամփոփումներով.

1. Ինչո՞ւ եք գնում:
2. Գիտե՞ք, թե ուր եք գնում: Ի՞նչ պատկերացում ունեք այն երկրի մասին, ուր գաղթում եք:
3. Ի՞նչ գործով եք զբաղվելու այդ երկրում:
4. Արդյո՞ք ձուլման վտանգը ձեզ չի մտահոգում:

¹ Հոդվածը պատրաստվել է Թեհրանում հրատարակվող «Յոյս» երկշաբաթաթերթի 2007թ. համարներում գետեղված նյութերի և հրապարակումների հիման վրա:

42 տարեկան կին, համալսարանական կրթությամբ, ամուսնացած է, ունի 2 զավակ.

1. «Ես նախկինում, երիտասարդ ժամանակ, եղել եմ Ամերիկայում և ծանոթ եմ դրան: Դա էլ մի երկիր է՝ իր լավ ու վատ կողմերով, և ընդհանրապես մեզ համար շատ նպաստավոր ու ցանկալի չէ: Աշխատանքը շատ խիստ կանոններ ունի, և աշխատավորները մինչև իրենց գործի ժամի ավարտը շատ խիստ ու տքնաջան են, որը համեմատելի չէ Պարսկաստանի դրության հետ: Ընդհանրապես, օրենք է տիրում այդ երկրում, և դա լավ է, բայց օրենքները հաճախ խիստ են և մեզ համար անընդունելի: Իմ գնալու գլխավոր պատճառը իմ անառողջ վիճակն է: Ես գնում եմ բուժվելու համար և զգում եմ, որ այնտեղ իմ առողջական տեսակետից համեմատաբար լավ է ու նպաստավոր: Ես միայն այս բանի համար եմ գնում, եթե ոչ, անչափ սիրում եմ Իրանը, իմ քաղաքը և իմ թաղը:

2. Ես Ամերիկայի օրենքները մեծ մասամբ չեմ սիրում և մեզ համար օտար ու խորթ եմ զգում: Աշխատողները իրավունք չունեն գոնե մեկ րոպե նստեն ու հանգստանան: Այնտեղ ձուլման վտանգը մեծ է, և մեր համայնքը խիստ տուժում է:

3. Չգիտեմ իմ բուժման պրոցեսը ինչպես է լինելու, ուրեմն չեմ կարող ասեմ ինչ գործ եմ անելու կամ որտեղից եմ գլուխ հանելու:

4. Իհարկե, ձուլման վտանգը մեծ է, և դա արդեն փաստված իրողություն է: Սփյուռքը կանգնած է ձուլման վտանգի առջև, բայց արևմտյան երկրում դրա թափը շատ արագ ու ուժեղ է: **Ես մեր ժողովրդի միակ փրկությունը տեսնում եմ Հայաստանում: Հայր միայն կարող է Հայաստանում հայ մնալ:**

42 տարեկան տղամարդ, ամուսնացած, միջնակարգ կրթությամբ.

1. «Գնում ենք Ամերիկա օրինական ճանապարհով, առանց վախի: Հիմա ճանապարհները շատ հանգիստ են և անցյալի նման վտանգավոր չեն:

Պարսկաստանի տնտեսական վիճակը օրեցօր ծանրանում է, չեմ կարծում մինչև մեր կյանքի վերջը կարողանանք մի տուն գնենք: Ամերիկայի կյանքը, ճիշտ է, ամեն ինչը պարտքով է, բայց պետությունը նախապես ամեն ինչ տալիս է, հետո մնում է մարդուն, որ իր աշխատանքով ու այսպես ասած վազելով օրեցօր բարելավի իր վիճակը:

2. Ամերիկան մի մեծ ու ծով երկիր է, աշխարհի դրամագլուխը մեծ մասամբ այնտեղ է և հսկայական միջոցներ ունի: Մարդու առաջ ճանապարհը բաց է՝ կուգես զարգացիր, չես ուզի՝ գնա ամենավատ ճանապարհով: Մարդիկ 3-րդ աշխարհի բնակիչների համեմատ ունեն ապահով ու հանգիստ կյանք: Պետք է գլուխդ կոռ անես ու գործես, այդպես ամեն ինչի կհասնես:

3. Ես այնտեղ մոտիկ ազգական ունեմ, և իմ ու տիկնոջս գործն ապահովված է: Նա մեզ ասել է՝ եկեք, ես ամեն ինչ դասավորել եմ: Իմ գործը որոշված է. ազգականս այնտեղ մի մեծ պահեստ ունի, որը պարունակում է մեծ ու ծանր ապրանքներ և կապոցներ: Ես ֆիզիկապես ուժեղ մարդ եմ, ուրեմն պետք է գնամ և այդ կապոցները դասավորեմ ու տեղադրեմ: Ամեն օր նման ծանր կապոցներ գալիս են ու դուրս են գնում: Իմ գործը այդ է: Չեմ ասում շատ լավ գործ է, բայց պարտավոր եմ. ոչ ոք չի կարող անարգել քո աշխատանքը կամ ծաղրել այն:

4. Միայն Գլենդելում ապրում են 1.2 միլիոն հայեր, այս մեծ քանակը պատճառ է դառնում, որ հայերը ավելի ուժեղանան և կարողանան իրենց ազգությունը պահպանեն: Արդեն շատ հայկական դպրոցներ կան, հայերենի դասաժամերը բավական շատացել են, և կապերը Հայաստանի հետ սերտացել է: **Ուժեղ և հարուստ սփյուռքը հազար անգամ ավելի օգտավետ է Հայաստանին, քան աղքատ ու ճնշված սփյուռքը:**

Մեկը, որ չի կամեցել ներկայանալ.

1. Գնում ենք, որ մի քիչ նորմալ ապրենք: Այստեղ ամեն ինչ ունենք՝ տուն, տեղ, գործ և լավ վիճակ, բայց ապագան շատ մութ է: Ես ինքս ուզում եմ այնտեղ մի լավ համալսարան գնամ: Ամուսինս էլ այստեղ լավ գործ ունի, և վստահ եմ, որ այնտեղ ևս կունենա իր պատվաբեր աշխատանքը:

2. Ամերիկան մեծ երկիր է, որը իրենից մեծ ուժ է ներկայացնում և հզոր պետություն է. ունի զարգացած տեխնոլոգիա և մտավոր ուժ, այնտեղ խտրականություն չկա և մարդկանց

չեն դատում ըստ իրենց կրոնի, ազգության և մաշկի գույնի: Ամերիկյան ազատ երկիր է, որը կարող է արդարորեն ճանաչել մեր դատը և պաշտպան դառնալ դրան: **Եթե հայ համայնքը հզորանա Ամերիկայում, դա ավելի նպաստավոր է հայ ժողովրդի և հայ դատի համար:**

3. Ես ուզում եմ այնտեղ ուսանել և բարձր աստիճանի հասնել: Իմ նպատակը դա է:

4. Եթե ընտանիքները բժախնդիր լինեն իրենց երեխաների հայեցի դաստիարակության նկատմամբ, վստահ եղեք, որ նրանք չեն ձուլվի: Հիմա աշխարհի իրադրությունը այնպես է, որ եթե ցանկանաս՝ կարող ես հայ մնալ: **Հայ մնալը մեզ համար շատ կարևոր խնդիր է:**

46 տարեկան կին, միջնակարգ կրթությամբ.

1. «Գնում եմք Ամերիկա: Պարզապես հոգնել եմ այս երկրից, ոչ մի առիթ չկա զարգանալու թե՛ գիտելիքներով և թե՛ նյութապես: 20 տարի է, որ ամուսնացել եմ, բայց դեռ տուն չունեմ, վարձով ենք ապրում, ամուսինս այս տարիների ընթացքին 3 գործ է փոխել, նույնիսկ ուրբաթ օրերն էլ աշխատանքի է գնացել, բայց մեր ծախսերը հազիվ է բավարարում: Մեկ տղա ունեմ, 17 տարեկան, որ արդեն զինվորացու կլինի:

2. Ես միշտ խոսում եմ Ամերիկայում ապրող ընկերուհիներին հետ, նրանց ասածով՝ մեծ հնարավորություններ կան սովորելու և զարգանալու համար: Ուզածդ ապրանքը կարող ես առնել ու փողը քիչ-քիչ տալ և ստիպված չես երեխիդ մեկ տարի մոբայլ ունենալու համար սպասեցնես: Այնտեղ տարիքավորներին լավ են հասնում:

3. Ես միշտ սիրել եմ սովորել, բայց առիթը չի եղել: Կերթամ... կգործեմ և պետության փողով դաս կսովորեմ: Բժշկի օգնական էլ կարող եմ լինել. օրինակ՝ ատամնաբույժի գործիքները կտամ իրեն:

4. Ճիշտն ասած՝ դրա մասին շատ էլ չեմ մտածում, մի՞թե հենց էստեղ մեր երեխեքը ինչքան են հայերեն սովորում: **Ո՛վ է հայերենին կարևորություն տալիս:** Լսելով՝ Ամերիկայում էլ միություններ կան, որ Հայաստանից երգիչներ են հրավիրվում կամ էլ որոշ դպրոցներում հայերեն դասեր են սովորում: Իմ կարծիքով՝ մարդ ինքը պետք է իր ազգության կարևորություն տա, եթե ուզում ա չձուլվի:

Ամուսիններ՝ 50-ին մոտ, 2 զավակները ԱՄՆ-ում են, աղջիկն ամուսնացած է Թեհրանում.

...4. Ինչու չէ: Թոռս կարող է հայ լինել, բայց դրանից հետո երաշխիք չկա: **Եթե Հայաստանում ապրելու և մնալու հնարք լիներ, չէի գնա Ամերիկա:**

Հարցվողը չի ցանկացել ներկայանալ.

1. Տիկինս ցանկանում է, որ գնանք, ես էլ մտածում եմ՝ աշխարհի վիճակը բարդանում է. թող չուշացնենք: Ես Իրաքի պատերազմում 8 ամիս պատասխանատու ծառայող եմ եղել, վատ հուշեր ունեմ:

2. Ես կարծում եմ՝ այդ երկիրը տերերի և ստրուկների երկիր է, որի մեջ մենք տեր չենք կարող լինել:

3. Ես գնում եմ ոտքի տեղ գտնելու նպատակով: Տեղավորվենք, հետո գանք: Տուն, աշխատանք չենք վաճառում:

4. Ոչ: Այնտեղ ավելի ակտիվ հայկականություն կա: Ազգային կյանքում ավելի ազդեցիկ են: Հայաստանի նկատմամբ ավելի լուրջ դեր ունեն և ուժեղ կապեր, քան մենք՝ այստեղից:

Նոր ամուսնացած զույգ.

... 4. Չէ՛, այդ մասին չենք էլ մտածել: Եվ մեր կարծիքով՝ ձուլման վտանգը ամեն տեղ էլ կա: Եթե կարողանանք Հայաստան գնալ, այդ վտանգը քիչ կլինի:

25 տարեկան, միջնակարգ կրթությամբ.

... 4. Դա կախված է մարդու մտածելակերպից, կարելի է մարդ Հայաստանում կամ հենց Թեհրանում ձուլվի, նույնպես էլ Միացյալ Նահանգներում:

40 տարեկան, մեքենավար.

1. Գնում եմ, քանի որ առավոտվա 8-ից գիշերվա 9-ը գործում եմ, նույնիսկ հինգշաբթի և ուրբաթ օրերը, և տարվա գլխին ուզում եմ լաստիկս (անիվներ) փոխեմ, փողերս չի հերիքում... Չեմ իմանում՝ ինչ ենք անելու: Ինչ հանում եմ, տան վարձ եմ տալիս, և ուտելիք ենք առնում: Գոնե այնտեղ այսքան աշխատելու դիմաց կարելի է ավելի հանգիստ ապրել, գոնե զավակներս հանգիստ կապրեն:

2. Մեր մոտ... ամեն տղերքն էլ գրվել են: Մեկը չի գրվել, որ երթա, նա էլ փող չունի, որ գրվի: Ասում են՝ ավելի լավ կլինի իրենց համար:

3. Չեմ իմանում, ինչ որ լինի կգործեմ, պարապ չեմ մնա:

4. Հույսով, որ չենք ձուլվի, որ հայ կմանաք, երեխեքս էլ հայերեն կսովորեն:

42 տարեկան, ամուսնացած է, ունի 2 զավակ.

1. Աշխատավարձս չի բավարարում, տան վարձը շատ գումար է պահանջում: Արդեն աղջիկս համալսարան պիտի գնա, ես վստահ եմ, որ այստեղ չեմ կարող նրան համալսարան ուղարկել:

2. Նրանք, ովքեր գնացել են, գոհ են, թեկուզ այնտեղ շատ են աշխատում, բայց վերջիվերջո իրենց կյանքը ապահովված է:

3. Չգիտեմ, ինչ կանեմ, բայց անգործ չեմ մնալու:

4. **Հայաստանից դուրս բոլոր հայերը ձուլման են ենթարկված: Ճիշտն ասած՝ այդ մասին չեմ էլ մտածել:**

30 տարեկան, նոր ամուսնացած.

1. Մենք նոր ենք ամուսնացել, ուզում ենք տուն վարձել, 15 միլիոն թուման փող են ուզում: Ես շատ եմ սիրում Թեհրանը, Իրանը, իմ ընկերներս ու բարեկամներս այստեղ են, բայց ինչ արած:

2. Հեռվից հեռու լսում եմ թե այնտեղ ոչ ոք անգործ չէ: Ես ու կինս էլ երիտասարդ ենք, կաշխատենք ու կապրենք:

3. Դե, գիտեք, մարդը ապրում է այնպես, ինչպես պայմաններն են թելադրում, ոչ այնպես, որ ինքն է ցանկանում. մինչ տեղ չհասնեմ, չեմ կարող ճիշտ կողմնորոշվել:

4. Ցավում եմ, շատ եմ ցավում, որ դա սփյուռքում մի անխուսափելի բան է, երանի Հայաստանում լինեին այն պայմանները, որ հնարավոր լիներ այնտեղ աշխատել, թե մոտ է իմ սիրած Իրանին, որով երբ սրտնեղեի, հանգիստ կգայի, կարոտս կառնեի ու կգնայի, և թե ձուլման վտանգը բնավ չի լինի:

Մի քանի ուշագրավ դիտարկումներ, որոնք իրենց հերթին նոր հարցադրումների առիթ կարող են լինել.

- Ուշագրավ է, որ հաճախ հնչում է այն բացատրությունը, թե Սփյուռքն Ամերիկայից շատ ավելի արդյունավետ կարող է օգնել Հայաստանին, քան Իրանից, թեպետ Իրանն այդքան մոտ է Հայաստանին: Անշուշտ, այստեղ խոսքը հիմնականում լոբբիստական գործունեության մասին է, այլ ոչ ուղղակի օգնության:
- Հետաքրքիր է նաև այն, որ ազգային ինքնության պահպանման համար ԱՄՆ-ը հիմնականում համարվում է ավելի նպաստավոր երկիր, քան Իրանը: Թեպետ հայտնի է, որ զարգացած արևմտյան երկրներում ազգային ինքնության պահպանումն առավել դժվար իրագործելի խնդիր է, քան արևելյան, հատկապես մահմեդական երկրներում:
- Պատասխաններից պարզ է դառնում, որ հարցվողներն արտագաղթում են Իրանից հիմնականում ապագան մշուշոտ տեսնելու պատճառով: Առաջին պլան են մղվում անձի սոցիալացման համար երկրում ստեղծված անբարենպաստ պայմանները: Պատճառների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում կրթություն ստանալու հարցը:

*Թամարա Վարդանյան
«Նորավանք» հիմնադրամ*

КОНФЛИКТ С ИРАНОМ

США - Иран. Политика будущего

Иран может стать одной из главных внешнеполитических тем президентской избирательной кампании в США.

Перечень претензий к Ирану со стороны Вашингтона достаточно обширен. Иран подозревается в попытке создания ядерного оружия (несмотря на то, что Совет Безопасности ООН дважды вводил соответствующие санкции); в поддержке террористических организаций (таких, как *Хамас* и *Хизбалла*); в поддержке шиитских милиций, устраивающих теракты в Ираке. Кроме того, лидеры Ирана призывали к уничтожению Израиля.

Мы предлагаем изложение позиций нынешних кандидатов в президенты США и их нынешние рейтинги (на основе опроса, проведенного компанией *Cook Political Report/RT Strategies* в середине мая 2007 года).

Кандидаты от Демократической партии

Хиллари Клинтон /Hillary Clinton, сенатор, 35%.

Клинтон заявила, что, если она будет избрана президентом, то немедленно начнет прямые переговоры с Ираном (нынешняя Администрация США от подобных предложений Тегерана постоянно отказывалась). Она также заметила, что США стоит использовать все варианты давления на Иран: «Мы должны использовать все инструменты, включая дипломатические и экономические, не исключая и угрозу использования военной силы».

Джон Эдвардс /John Edwards, в недавнем прошлом – сенатор и кандидат в вице-президенты США, 11%.

Эдвардс предлагает заключить с Ираном пакт о ненападении, в случае, если Тегеран согласится умерить свои ядерные амбиции. Для достижения этой цели Эдвардс призывает к прямым переговорам с Ираном. В то же время, он не считает недопустимым использование военной силы.

Барак Обама /Barack Obama, сенатор, 24%.

Обама выступает за политику «открытого диалога» с Ираном, а также за то, чтобы Иран согласился играть более позитивную роль в Ираке. Вместе с тем, он является сторонником жестких санкций, которые призваны остановить ядерную программу Ирана. Обама также неоднократно заявлял, что военный конфликт с Ираном был бы ужасной ошибкой.

Кандидаты от Республиканской партии

Рудольф Джулиани /Rudy Giuliani, экс-мэр Нью-Йорка, 25%.

Джулиани считает, что США должны действовать дипломатическими методами, однако военный вариант решения иранской проблемы исключать не следует. По его мнению, военная операция против Ирана может быть крайне опасной, но еще более опасно, если ядерное оружие будет контролировать «иррациональная персона», наподобие Ахмадинежада.

Джон МакКейн/John McCain, сенатор, 24%.

Неоднократно заявлял, что Иран с ядерным оружием представляет собой «неприемлемый риск» для региональной и глобальной стабильности: «Есть только одна вещь хуже военной операции – Иран с атомной бомбой». По его мнению, военная операция должна быть последним доводом в противостоянии с Ираном, однако отказываться от этой возможности нельзя.

Митт Ромни/Mitt Romney, бывший губернатор штата Массачусетс, 9%.

Опубликовал специальный план по Ирану, предусматривающий его дипломатическую изоляцию, ужесточение санкций, привлечение арабских государств к решению иранской проблемы. Ромни выступает против двусторонних переговоров с Тегераном, а также за отказ американских компаний от ведения бизнеса с Ираном. Он также не исключает возможности нанесения военного удара.

Финансовый крестовый поход

Совет Безопасности ООН дважды вводил против Ирана ограниченные экономические санкции, чтобы заставить Тегеран остановить ядерную программу. США также действуют в этом направлении, причем намного активней ООН.

США пошли намного дальше, чем предписывает Резолюция 1737 Совета Безопасности ООН, которая заморозила финансовые активы 10-ти иранских фирм (не банков) и 12-ти физических лиц, предположительно связанных с ядерной программой. Большинство американских аналитиков считают, что эти санкции не нанесли особого ущерба Тегерану.

Исследовательский центр Совет по внешней политике (*Council for Foreign Relations*) отмечает, что в любом случае, любого рода санкции против Ирана наталкиваются на сопротивление государств, имеющих с Тегераном экономические связи. По данным Института американского предпринимательства (*American Enterprise Institute*), **наиболее крепко финансово и экономически связаны с Ираном Франция (объемы двусторонней торговли и инвестиций в иранскую экономику за период с 2000 по 2006 год превысили \$30.2 млрд), Китай (\$29.6 млрд), Германия (\$26.1 млрд), Италия (\$23.7 млрд) и Австрия (\$18.1 млрд). Франция и Германия, наряду с Великобританией (9-е место с \$12.7 млрд) и США (12-е место. \$4.2 млрд), являются главными противниками ядерной программы Тегерана. В этом перечне Россия заняла 14-е место с \$3.3 млрд. В свою очередь, исследовательский центр *Conflict Securities Advisory Group* пришел к выводу, что на долю Европейского Союза приходится почти 40% иранского импорта. Бизнес-интересы в Иране (в основном в сферах энергетики и телекоммуникаций) имеют 124 крупные европейские компании, акции которых котируются на международных биржах.**

По мнению Администрации США, масштабные санкции изменят взгляды иранского режима и ограничат его возможности по приобретению ядерных технологий на международном «черном» рынке. Одновременно, эти санкции не должны осложнить положение населения Ирана. В любом случае, некоторые американские эксперты сравнили нынешние санкции с политикой США в отношении ЮАР, где существовал режим апартеида. Показательно, что известный журналист Майкл Хирш (*Michael Hirsch*), работающий в журнале *Newsweek*, назвал эти действия «финансовым крестовым походом».

Большинство экспертов считают, что иранская экономика достаточно уязвима к подобным санкциям. Дело в том, что Иран нуждается в иностранных инвестициях и технологиях для модернизации ряда отраслей своей экономики и разработки нефтяных месторождений. Если санкции приобретут масштабный характер, то наиболее пострадает именно иранская энергетика, особенно нефте- и газодобывающий сектор. Французская газета *Le Monde* опубликовала секретный доклад иранского парламента, в котором был сделан вывод, что если против Ирана будут введены тотальные санкции, то страна, используя лишь внутренние ресурсы, сможет продержаться не более года.

Акбар Торбат (*Akbar Torbat*), экономист из Калифорнийского университета (*California State University*), опубликовал исследование «Влияние американских санкций на Иран» (*Impacts of the US Trade and Financial Sanctions on Iran*), в котором доказывает, что Иран может прибегнуть к помощи России и Китая для получения финансовых ресурсов, однако, в любом случае, будет вынужден занимать деньги на намного менее выгодных условиях. Торбат также отмечает, что обострение ситуации повышает риски для иностранных компаний, работающих в Иране, что не может не влиять на их решения.

Министерство финансов США (*Department of Treasury*) оказывает давление на банки и компании, ведущие дела с Ираном. Суть этого давления заключается в следующем: подобные структуры получают предупреждение, что они лишатся доступа на финансовые рынки США, если будут сотрудничать с иранскими структурами, связанными с террористами, ядерной и ракетными программами.

В 2005 году на \$80 млн был оштрафован голландский банк ABN Amro за то, что не предоставил полной информации о своих связях с иранским банком «Мелли» (частично принадлежит Ливии). Ряд европейских банков (UBS, HSBC, Credit Suisse и Commerzbank) перестали использовать доллары при проведении расчетов с Ираном, перейдя на евро. Последней жертвой финансовой атаки США стал иранский государственный банк «Сепах», пятый по размерам активов среди иранских финансовых структур. Министерство финансов США запретило всем американским бизнес-структурам и частным лицам вести дела с «Сепах», который подозревается в финансировании ядерных программ путем осуществления сделок на международном «черном» рынке. Кроме того, «Сепах» запрещено проводить транзакции в долларах США (ранее аналогичные санкции были введены в отношении банка «Садерат»).

В результате, по данным Министерства финансов, в последнее время резко сократились государственные экспортные кредиты Ирану из таких стран, как Германия, Франция и Япония. Кроме того, некоторые европейские банки полностью прекратили все операции с Ираном или значительно сократили их, обосновав свое решение деловыми соображениями. Впрочем, Иран еще год назад закрыл большинство своих счетов в европейских банках и перевел их в банки государств Персидского залива. Ряд транснациональных корпораций также сократил инвестиции в Иране, в том числе ограничил капиталовложения в иранские нефтяные месторождения.

Ныне государства Европейского Союза обсуждают возможность введения дополнительных санкций против Ирана, включающих запрет на поездки для иранских официальных лиц, ученых и студентов, связанных с ядерными и ракетными программами и исследованиями.

Эксперты исследовательского центра *Brookings Institution* считают, что экономические санкции против Ирана могут быть успешными только в том случае, если будут широкомасштабными, а не точечными. Основываясь на этих выводах, некоторые члены Конгресса США настаивают на более широких санкциях, включая обязательное изъятие инвестиций, санкции на иностранные филиалы американских компаний и «черные списки» иностранных и американских фирм, которые ведут дела с Ираном.

Санкции США против Ирана. Краткая хронология

США долгое время борются с Ираном с помощью экономических санкций. Эти санкции не заставили Иран отказаться от поддержки террористических структур или своей ядерной программы.

Многие другие государства также вводили в отношении Ирана точечные санкции (например, запреты на передачу военных материалов и технологий), однако они не запрещали своим фирмам вести бизнес с Ираном.

Согласно выводу Института международных экономик (*Institute for International Economics*), экономические санкции не способны заставить то или иное государство отказаться от получения ядерного оружия (как известно, Израиль, Индия, Пакистан и Северная Корея стали членами «ядерного клуба»), однако они способны существенно замедлить этот процесс.

1984 год. После того, как в Ливане поддерживаемые Ираном боевики взорвали казарму, где располагались миротворцы США, Госдепартамент США внес Иран в список государств, поддерживающих терроризм. Это автоматически ужесточает правила экспортного контроля и, кроме того, лишает подобное государства права на получение американской помощи (за исключением гуманитарной – к примеру, после разрушительного землетрясения 2003 года, в результате которого погибли 40 тыс. человек, США предоставили Ирану помощь на сумму в \$5.7 млн).

1987 год. США ввели эмбарго на импорт в США абсолютно всех иранских товаров. Параллельно был запрещен экспорт в Иран 14 типов товаров, которые потенциально могли использоваться для военных целей – в том числе, двигателей, мобильных систем связи, электрогенераторов и пр.

1995 год. США запретили гражданам и компаниям США финансировать, консультировать и управлять нефтяными проектами в Иране. В результате оказались заблокированными инвестиции в размере \$1 млрд, которые планировала осуществить компания *Conoco*.

Чуть позже, в результате появлений сообщений о том, что Иран помогает террористам и пытается приобрести ядерные технологии, была запрещена вся прямая торговля США с Ираном и часть не прямой торговли (американские компании перепродавали иранскую нефть третьим государствам, объем этого рынка оценивался в \$4 млрд). Франция, Великобритания и Германия осудили этот шаг США.

1996 год. Конгресс США принял закон о санкциях против Ирана и Ливии (называется *Iran and Libya Sanctions Act*). Согласно этому закону, любая (не только американская) компания, которая за год инвестировала более \$40 млн в иранскую нефтяную отрасль, может быть подвержена санкциям. Варианты наказания могут быть следующими: отказ в предоставлении государственных кредитов и субсидий США; отказ от предоставления компании-нарушителю экспортных лицензий (в случае, если нарушитель использует какие-либо американские технологии); запрет частным финансовым структурам США предоставлять нарушителю кредиты в размере более \$10 млн; запрет компании-нарушителю работать с государственными ценными бумагами США; запрет на участие в любом коммерческом проекте, финансируемом из бюджета США; введение ограничений на экспорт в США. Срок действия закона – пять лет.

1997 год. США запретили реэкспорт американских товаров, технологий и услуг в Иран. Мишенью этого запрета были иностранные компании-посредники.

1998 год. Россия подписала контракт с Ираном на строительство АЭС в Бушере. Несколько месяцев спустя США ввели экономические санкции в отношении 10-ти российских фирм, связанных с ядерной и ракетной программами Ирана.

1999 год. США разрешили экспортировать в Иран продовольствие и медицинские товары, однако в каждом конкретном случае компании-экспортеры должны были получать специальное разрешение. Кроме того, Администрация США отказывалась финансировать или гарантировать подобные сделки.

2000 год. США несколько ослабили санкции против Ирана, разрешив поставку в США иранских товаров широкого потребления, таких, как ковры, икра, фисташки, сухофрукты и пр. Чуть позже США ввели санкции против пяти иранских компаний, обвиненных в распространении ракетных технологий. Санкции имели символический характер.

2001 год. Конгресс США пролонгировал закон 1996 года. Это решение вызвало возмущение Европейского Союза, который пригрозил ввести свои санкции против американских фирм, если европейские компании будут наказаны США за торговлю с Ираном.

2002 год. США заблокировали заявку Ирана о приеме во Всемирную Торговую Организацию (*World Trade Organization*). Чуть позже США ввели санкции против девяти китайских и одной индийской компании, уличенных в продаже запрещенных товаров в Иран.

Международное агентство по атомной энергии (МАГАТЭ) (*International Atomic Energy Agency*) сообщило, что Ирану потребуется 3-8 лет для того, чтобы создать ядерное оружие. Таким образом, МАГАТЭ пришло к тем же выводам, что ЦРУ.

Экономика Ирана в последние месяцы оказалась в состоянии стагнации. Одной из причин этого могут считаться международные санкции, однако намного больший эффект оказывает неэффективная работа правительства и отсутствие жизненно важных реформ. По сообщению агентства *Associated Press*, цены на овощи в Иране в последние месяцы выросли в три раза, стоимость аренды жилья – в два раза. Уровень безработицы по разным оценкам составляет 11% (официальные данные) – 30% (данные Всемирного Банка (*World Bank*)). Однако экономика Ирана демонстрирует достаточно высокие темпы роста. Кроме того, Иран обладает значительными валютными резервами, объем которых достигает \$40 млрд.

По данным Исследовательской службы Конгресса США (*Congressional Research Service*), Иран обладает пятыми по величине в мире запасами нефти. Крупнейшими покупателями иранской нефти в 2006 году являлись Китай (примерно 4% китайского нефтяного импорта), Япония (12%), Южная Корея (9%), Италия (9%), Франция (7%), Бельгия (14%), Турция (22%), Греция (24%) и Индия (10%).

Примечательно, что Иран не имеет возможности самостоятельно перерабатывать нефть. Он импортирует бензин и керосин из иных стран, в первую очередь из Индии, Кувейта, Турции и Венесуэлы.

Крупнейшие торговые партнеры Ирана – Япония, Китай, Италия, Германия и Франция. Крупнейшие инвестиции не в нефтяной сфере в Иране осуществляют компании *Renault* и *Peugeot* (Франция), *Volkswagen* и *Mercedes* (Германия), которые производят автомобили и запчасти к ним. Китайские компании строят в Иране верфи, алюминиевый комбинат и цементный завод. Объединенные Арабские Эмираты, Индия и Южная Корея финансируют и проводят модернизацию сталелитейных заводов.

Вооруженные силы Ирана являются достаточно крупными, однако их реальная боевая мощь неизвестна. Численность вооруженных сил составляет примерно 545 тыс. человек. На их вооружении состоят примерно 1.7 тыс. танков (в том числе – 480 советских Т-72), 280 боевых самолетов (включая 25 МиГ-29 и 30 Су-24), а также около 200 боевых кораблей разных классов. Военный бюджет Ирана составляет \$6.6 млрд (2005 год).

Исследовательский центр Британско-американский совет по безопасности (*British American Security Information Council*) проанализировал утверждения официальных лиц США о том, что Иран негласно поддерживает инсургентов в Ираке. США выдвигают подобные обвинения с начала 2007 года, однако предъявляемые доказательства имеют косвенный характер и не могут считаться гарантированным свидетельством того, что Иран действительно активно поддерживает инсургентов. Шиитская форма Ислама является государственной религией Ирана. В Ираке шииты составляют 60% населения и ныне контролируют власть.

Британско-американский совет по безопасности считает, что Иран прямо или косвенно поддерживает 3 из примерно 24-х крупных милиций, действующих в Ираке. В их числе: «Бригады Бадра» (вооруженные подразделения Верховного Совета Исламской Революции в Ираке. Эта структура была создана иракскими шиитами в 1982 году и выступала против режима Саддама Хусейна. Ныне эта организация пользуется большим влиянием в силовых структурах Ирака и активно атакует суннитов, насчитывает 5-15 тыс. боевиков), «Армия Махди» (образована после краха режима Саддама Хусейна. Получает значительную финансовую поддержку от Ирана, кроме того, боевики «Армии Махди» проходят обучение в Иране, насчитывает 15-20 тыс. человек) и группа «Кудс» (малоизвестная, но весьма мощная структура, включающая в свой состав многих боевиков ливанской *Хизбаллы* и их иранских инструкторов. Насчитывает от 5-ти до 30 тыс. человек. В основном занимается разведывательными операциями в интересах Ирана и периодически атакует силы коалиции).

По данным Госдепартамента США, в 2005 году США затратили на поддержку иранских правозащитных, гуманитарных и иных неправительственных организаций \$1.5 млн. В 2006 году размеры этих ассигнований были увеличены до \$10 млн.

Опрос телекомпании CNN показал, что 46% американцев считают Иран врагом, а 3% – союзником США. 63% жителей США выступают против военного удара по Ирану, 33% – одобрили бы его. Опрос телекомпании CBS показал, что 18% американцев ныне считают Иран непосредственной угрозой для безопасности США. 65% считают, что Иран поддерживает иракских инсургентов. 18% жителей США поддержали бы военные методы решения иранской проблемы, 54% выступают за исключительно дипломатические действия. Опрос телекомпании ABC продемонстрировал, что 41% американцев более или менее одобряют «иранскую» политику администрации Джорджа Буша, 58% она не нравится. Исследовательский центр *Pew Research Center* сформулировал вопрос следующим образом: «Должны ли США занимать жесткую позицию в отношении Ирана или должны любой ценой избегать конфронтации?» Мнения опрошенных разделились поровну – оба варианта набрали по 43% голосов.

Washington ProFile - 26 мая 2007 года - #48(788)

ԲԱՇԱՐ ԱԼ-ԱՍԱԴԸ՝ ՍԻՐԻԱՅԻ ՎԵՐԸՆՏՐՎԱԾ ՆԱԽԱԳԱՀ

2000թ. հուլիսի 10-ին Հաֆեզ Ալ-Ասադի մահվանից հետո (որի կառավարման 30 տարիների ընթացքում ներքաղաքական կյանքը Սիրիայում անփոփոխ էր ընթանում) երկրի սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն անելուց հետո 2000թ. հուլիսի 12-ի համընդհանուր հանրաքվեի արդյունքում Հաֆեզ Ալ-Ասադի որդին՝ Բաշար Ալ-Ասադը, դարձավ երկրի նախագահ: Այդպիսով Սիրիայի պատմության մի ամբողջ քաղաքական դարաշրջան ավարտվեց, և սկսվեց նորը, որն իր հետ բերելու էր նոր հիմնախնդիրներ:

Արևմտյան կրթություն ստացած երիտասարդ Բաշար Ալ-Ասադի իշխանության գալը մեծ ակնկալիքներ առաջացրեց՝ կապված ներքաղաքական արմատական բարեփոխումների հետ¹: Վերջինս առաջ քաշեց երկրի տնտեսական ազատականացման և պետության արդիականացման խնդիրներ: Նրա իշխանության առաջին չորս ամիսները բավական խոստումնալից էին, և պատահական չէ, որ այդ շրջանը ստացավ «դամասկոսյան գարուն» անվանումը: Առաջին շրջանի բարեփոխումներից առանձնահատուկ է Ազգային առաջադիմական ճակատի (ԱԱՃ)² հիմնադիր փաստաթղթի փոփոխությունը: Եթե ԱԱՃ հիմնադիր փաստաթղթում՝ Ազգային խարտիայում հատուկ նշված էր ճակատում «Բաասի» առանձնահատուկ դերը, որը միակն էր ԱԱՃ անդամ կուսակցություններից, որ կարող էր ունենալ սեփական թերթ, ապա փոփոխությունից հետո ԱԱՃ անդամ կուսակցություններից երեքին իրավունք տրվեց ունենալ սեփական թերթ: ԱԱՃ անդամ բոլոր կուսակցություններն իրավունք ստացան գործել երիտասարդության շրջանում և համալսարաններում:

Բաշար Ալ-Ասադի կառավարման առաջին շրջանում իրականացվեցին քաղաքականա-կյանքի համաներումներ: Մամուլում սկսեցին որոշակիորեն նահանջ ապրել նախկինում արգելված թեմաները, սկսեցին գործել քաղաքական մի քանի ակումբներ: Հրապարակվեցին Բաշար Ալ-Ասադին ուղղված մի քանի «բաց» նամակներ: Կարելի է ասել, որ Սիրիայի նման ավտորիտար երկրում տեղի ունեցան ժողովրդավարական որոշակի տեղաշարժեր, որոնք, սակայն, հետագայում ընդհատվեցին:

Հատկանշական է, որ Բաշար Ալ-Ասադի իշխանության գալուց անմիջապես հետո որոշակիորեն ակտիվացան նաև իսլամականները³: Վտարանդիության մեջ գտնվող սիրիական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության նախագահ Ալի Սադրեդդին Բայանունին երկրի ղեկավարներին կոչ արեց իրականացնել քաղաքական բարեփոխումներ: Իսկ 2004թ. օգոստոսին Բաշար Ալ-Ասադի և «Մուսուլման եղբայրների» ներկայացուցիչների միջև շփումներ կազմակերպվեցին, ինչը, սակայն, արդյունք չտվեց: Սիրիական իշխանությունները միշտ

¹ Բաշար Ալ-Ասադի կառավարման առաջին տարիներին տեղի ունեցած բարեփոխումների մասին մանրամասն տե՛ս *Մ.Մանուկյան*, Բաշար ալ-Ասադի կառավարման առաջին չորս տարիներին Սիրիայում հասարակական և քաղաքական որոշ տեղաշարժերի մասին (2000-2004թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Եր., 2004, էջ 204-216:

² Ազգային առաջադիմական ճակատը հիմնվել է 1972թ.: Ներկայումս ԱԱՃ կազմի մեջ են մտնում «Բաասը», Սիրիական կոմկուսը, Արաբական սոցիալիստական միությունը, Արաբ սոցիալիստների շարժումը, Յունիոնիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, Բանվորների արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, Գյուղացիների համընդհանուր ֆեդերացիան և Բաասական հեղափոխական երիտասարդների միությունը:

³ Ինչպես հայտնի է, 1976-1982թթ. Սիրիայում ծայր առավ սուր հակամարտություն պետության և իսլամական ընդդիմադիրների միջև, ինչն ավարտվեց «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական արմատական կազմակերպության պարտությամբ: Կրոնական ընդդիմության վտանգն արմատախիլ արվեց ամենածայրահեղ գործողությունների միջոցով: Այս մասին մանրամասն տե՛ս *Մ.Մանուկյան*, Իսլամական շարժումը Սիրիայում 2000-2005թթ., Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Եր., 2006, էջ 95-101:

իրական սպառնալիք են համարում «Մուսուլման եղբայրներին»՝ որպես ներկա իշխանությունների միակ այլընտրանք:

Բաշար Ալ-Ասադի օրոք դանդաղորեն մեկնարկված բարեփոխումներից շատերը նրա կառավարման առաջին շրջանում (2000-2007թթ.) վերջնական լուծում չստացան: Ստեղծված իրողության հիմնական պատճառները կապված են Բաշար Ալ-Ասադի իշխանության երկու հենարանների՝ «Բաաս» կուսակցության և վերջապես՝ բանակի հետ, որտեղ պահպանողական «հին գվարդիան» բարեփոխումները դիտարկում է որպես իր դիրքերին ուղղված սպառնալիք: Մասնավորապես՝ «հին գվարդիայի» հետ Բաշար Ալ-Ասադը չի կարող հաշվի չնստել:

Իշխանությունները գիտակցում են, որ երկրում ամենաաննշան ազատական տեղաշարժը կարող է ապակայունացնել իրավիճակը, որի ամենախոցելի կողմերից մեկը նախևառաջ կապված է ալավի-սուննի փխրուն հավասարակշռության հետ: Լինելով կրոնական փոքրամասնության՝ ալավիական համայնքի ներկայացուցիչ՝ Բաշար Ալ-Ասադը միշտ զգում է այդ վտանգը:

Ամեն գնով փորձելով իսլամական ուժերին պահել վերահսկողության մեջ և հստակ գիտակցելով քաղաքական իսլամից եկող վտանգը՝ իշխանությունները միննույն ժամանակ քաղաքական նպատակներով որոշակիորեն շահարկում են իսլամական գործոնը: Իշխանական վերնախավը որոշակիորեն իսլամականացել է: Բաշար Ալ-Ասադի ելույթներում ավելի մեծ տեղ է սկսել գրավել իսլամական հռետորականությունը: Չնայած Սիրիան բնույթով աշխարհիկ երկիր է, կարելի է ասել, որ սիրիական հասարակությունը նույնպես իսլամականանում է: Երկրում մեծ թափ է ստացել մզկիթաշինությունը, համատարած է դարձել գլխաշոր կրելու սովորությունը:

2007թ. մայիսի 27-ի հանրաքվեն

Նախքան հանրաքվեն, 2007թ. ապրիլի 23-ին Սիրիայում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Սիրիայի ներկայիս խորհրդարանի 250 տեղերից 167-ը զբաղեցրին ԱԱԶ պատգամավորները, որոնց մեջ գերակշռող են բաասականները: Մնացյալ 83 տեղերը զբաղեցրել են անկախ պատգամավորներ: Մայիսի 10-ին 41-ամյա Բաշար Ալ-Ասադի միասնական թեկնածությունը հաստատվեց սիրիական պառլամենտում՝ Մաջլիս աշ-շաաբում:

Նախքան հանրաքվեն, Սիրիայի տարբեր շրջաններում տեղի ունեցան հանրահավաքներ՝ ի պաշտպանություն Բաշար Ալ-Ասադի: Դրանց մասնակցում էին նաև հոգևոր դասի ներկայացուցիչներ՝ թե՛ մահմեդական, թե՛ քրիստոնյա: Ցույցերի ժամանակ սիրիական դրոշները և պաստառները ձեռքներին՝ մարդիկ վանկարկում էին հին և հայտնի «բաասական» ներբողը՝ ուղղված Բաշար Ալ-Ասադին. «Հոգով և արյամբ քեզ մատաղ լինենք, ով Բաշար»: Ի դեպ, այս կարգախոսը ձոնվել է բաասական առաջնորդներ Սադամ Հուսեյնին և Բաշար Ալ-Ասադին:

Ցուցարարները եկել էին աջակցելու նախագահին: Նրանցից շատերին, սակայն, ավտոբուսներով բերել էին գործարաններից, համալսարաններից կամ այլ հաստատություններից: Վերջիններս Սիրիայում ստեղծված ճնշման մթնոլորտում պարզապես չէին կարող մերժել ցույցին մասնակցելու առաջարկը:

Որոշ տեղեկությունների համաձայն՝ իշխանամետ ցույցերի նախաձեռնությունների մեջ մեծ դերակատարություն ունի սիրիացի հայտնի գործարար Ռամի Մախլուֆը՝ Բաշար Ալ-Ասադի զարմիկը, որը բազմաթիվ բիզնեսներ ունի, որոնցից է նաև «ՍիրիաԹելը»:

Համընդհանուր հանրաքվեն Սիրիայում տեղի ունեցավ մայիսի 27-ին, որի արդյունքում երկրի նախագահի պաշտոնում ձայների բացարձակ մեծամասնությամբ վերընտրվեց միակ թեկնածուն: Հատկանշական է, որ կիրակի օրն ընտրատեղամասերը փակվել են մոտ 3 ժամ նշված ժամից ուշ: Սիրիայի ներքին գործերի նախարարի հավաստիացմամբ՝ հանրաքվեի երկարացման մասին որոշումն ընդունվել է տեղական ընտրատեղամասերի խնդրանքով, քանի որ քվեարկողների հոսքը չի դադարել:

Եզրակացություններ

Այսպիսով, Բաշար Ալ-Ասադը կշարունակի կառավարել երկիրը ևս յոթ տարի: Նրա օրոք Սիրիան սոցիալ-տնտեսական ոլորտում որոշակի քայլեր արել է: Տնտեսական բարեփոխում կարելի է համար այն, որ այսօր Սիրիայում գործելու թույլտվություն են ստացել օտարերկրյա (մասնավորապես՝ լիբանանյան) բանկերի մասնաճյուղեր: Սիրիական տնտեսության մեջ մեծացել են օտարերկրյա ներդրումների չափերը: Ընդդիմախոսները, սակայն, շարունակում են պնդել, որ երկրում տնտեսական բարեփոխումների մասին խոսելն իրատեսական չէ, քանի որ գրեթե բոլոր կարևորագույն ճյուղերը մոնոպոլացված են և գտնվում են իշխող ընտանիքին մոտ կանգնած մարդկանց ձեռքին: Երկրում մեծ չափերի է հասնում գործազրկությունը, ինչպես նաև կոռուպցիան:

Քաղաքական բարեփոխումների առումով դրական տեղաշարժեր գրեթե չկան: Սիրիան շարունակում է մնալ տոտալիտար երկիր: Երկրում բացակայում է քաղաքական դիսկուրսը, ազատ խոսքն արգելված է, մամուլն ամբողջովին վերահսկվում է պետության կողմից: Սիրիայի սահմանադրության մեջ շարունակում է ամրագրված մնալ պետության և հասարակության մեջ «Բաաս» կուսակցության գերակայության մասին համապատասխան դրույթը: Բազմաթիվ քաղաքական այլախոհներ այսօր գտնվում են բանտերում:

Այդ համատեքստում Բաշար Ալ-Ասադը խոսում է ժողովրդավարության մասին: Նա մերժում է արևմտյան ժողովրդավարությունը, նշում, որ ցանկանում է իրականացնել իրենց «ուրույն ժողովրդավարական փորձը»: Նրա համոզմամբ՝ ներկայումս քաղաքական փոփոխությունների փորձարկման ժամանակը չէ: Ինչպես նշում է սիրիացի ժամանակակից գրող Սամի Մուբայեդը, այսօր Սիրիայում երկու տաբու կա: Մեկը՝ դավանական խնդիրներն են, մյուսը՝ Սիրիայի նախագահի թեման: Սրանք այն երկու կարմիր գծերն են, որոնք ոչ մեկն իրավունք չունի անցնել: Սիրիացի այլախոհ Յասին Ալ-Ջաջ Սալեհի կարծիքով (վերջինս 16 տարի անց է կացրել բանտում)՝ Սիրիայում ոչ մեկը լիովին ապահովված չէ: Սալեհը չի հարգում այն մարդկանց, ովքեր վախենում են այլախոհ մտքեր արտահայտելուց, քանի որ այդ պարագայում միշտ ստիպված կլինեն ապրել այն մթնոլորտում, ինչն իրենց պարտադրվում է: Իսկ Սիրիայում իսկապես կա այդ վախի մթնոլորտը:

Սիրիայում բարեփոխումներին խոչընդոտող հանգամանք է նաև արտաքին գործոնը: ԱՄՆ ներխուժումն Իրաք, լիբանանյան կնճիռը, Ռաֆիկ Ալ-Ջարիրիի սպանության և այլ հարցերում Սիրիային ուղղված մեղադրանքները շարունակում են խնդիրներ առաջացնել երկրի համար: Այս իրողությունները ստիպում են Բաշար Ալ-Ասադին ավելի մեծ ուշադրություն դարձնել արտաքին խնդիրներին, ցնցումներ չառաջացնել ներքաղաքական կյանքում: Ընդհանրապես, քաղաքական կուրսի փոփոխությունը հատուկ է լեգիտիմ, ինչպես նաև հասարակության լիարժեք աջակցությունը վայելող դեկավարին: Այդպիսին չէ Բաշար Ալ-Ասադը, որի վրա շարունակ ուժեղանում են ԱՄՆ ճնշումները:

Միննույն ժամանակ, Սիրիայի քաղաքացիներից շատերն իրենց ձայնը տալիս են Բաշար Ալ-Ասադին ոչ թե այն բանի համար, որ «Բաասի» կողմնակիցներն են, այլ որովհետև ի դեմս Բաշար Ալ-Ասադի տեսնում են այն ուժը, որը կարող է պահել երկրի կայունությունն ու անվտանգությունը: Մեկ այլ պարագայում Բաշար Ալ-Ասադին ձայն տվողները գիտակցում են, որ հակառակ դեպքում Սիրիայում կհաստատվեն իշխող կուսակցությանը միակ իրական այլընտրանք համարվող իսլամական ուժերը, որոնց առաջատարը «Մուսուլման եղբայրներն» են:

*Արաքս Փաշայան
«Նորավանք» հիմնադրամ*

ՅԱԴ ՎԱՇԵՄ

Հոլոքոստի մասին հիշողությունն Իսրայելում

Պետությունները՝ ուժեղ թե թույլ, իրենց ներքին թե արտաքին քաղաքականության հիմնադրույթների մշակման մեջ, որպես կանոն, ձգտում են հաշվի առնել իրենց ժողովրդի ինքնության հիմնարար տարրերը: Այսպես թե այնպես, դրանցում տեսակարար մեծ կշիռ ունեն պատմական անցյալի հետ անխախտ կապը մատնանշող իրադարձություններով պայմանավորված դրույթները: Այդ անցյալն իր մեջ կարող է կրել ինչպես տրավմատիկ երանգներ ունեցող, նույնպես և հերոսական պայքար ու հաղթանակներ մատնանշող հիշողությունների տարրեր: Դրանց համակցված օգտագործումը թույլ է տալիս պետություններին անհրաժեշտության դեպքում քաղաքական կուրսում որոշ, իրավիճակի թելադրանքով պայմանավորված շեշտադրումներ անել (օրինակ, այսօր ամերիկյան քաղաքագիտական ընտրանին, ելնելով ԱՄՆ – Ռուսաստան հարաբերությունների վատթարացումից, փորձում է վերակենդանացնել Սադը պատերազմում կոմունիզմի դեմ պայքարի հիշողությունը, *տե՛ս հավելվածը*): Կան պետություններ, որոնց համար հենց դաժան հետևանքներ ունեցող անցյալի իրադարձություններին հենվելն է դարձել քաղաքական կուրսի կարևորագույն, եթե ոչ միակ ճանապարհի աշխարհում իրենց եւր հաջողությամբ ներկայացնելու գործում:

Հիշողության վրա հենված քաղաքականությունը բյուրեղացվում է տասնամյակների ընթացքում և նրա ազդեցությունը հասարակության վրա միանգամից ու անմիջապես չէ, որ երևում է: Երբեմն հիշողության գործոնը լոկ ինքնաբերական ձևով դրսևորվում է տվյալ հասարակության համար ճգնաժամային պահերին, երբեմն՝ համապատասխան մշակվածության պարագայում, մշտապես ներկա է հասարակության ամենօրյա կյանքում, նրա ինքնադրսևորման և ինքնության անքակտելի մասն է կազմում: Այդ քաղաքականությունը բաղկացած է միմյանց հետ անտեսանելի թելերով կապված բազմաթիվ կտորներից, որոնցից յուրաքանչյուրը, առանձին վերցրած, կարող է և էական չթվալ երկրի քաղաքական կուրսը մշակողների համար, սակայն, թերևս, այդ տարրերի համակցումն է, որ կազմում է հիշողության վրա հենված քաղաքականության ամբողջությունը:

Հիշողության գործոնին հենված քաղաքականության հիմնարար մասը, թերևս, կազմում է տվյալ ժողովրդի ինքնության համար կարևորագույն նշանակություն ունեցող իրադարձության (իրադարձությունների) վերաբերյալ *հիշողության գրանցմանն ու պահպանմանն* ուղղված համալիր միջոցառումների շարքը: Դրանց թվում իրենց կարևորագույն, անփոխարինելի տեղն ունեն թանգարանները: Թանգարանային ինչպիսի՞ մատուցմամբ է իրականացվում Հոլոքոստի (եբրայերեն՝ Շոա) մասին հիշողության պահպանության գործն Իսրայելում:

Հրեա ժողովրդի եվրոպական հատվածի աղետի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը կոչվում է «Յադ Վաշեմ. Հոլոքոստի նահատակների և հերոսների [մասին] հիշողության [պահպանման] իրավասու մարմին» (*Yad Vashem. The Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Authority*): «Յադ Վաշեմ» արտահայտությունն իվրիտ լեզվում թարգմանաբար նշանակում է «ձեռք (հուշարձան) և անուն» և վերցված է Հին Կտակարանի Եսայիայի գրքից (ՕՁ:5), որտեղ մարգարեն Աստծո անունից վստահեցնում է անգավակ հրեաներին, որ նրանք ապագա սերունդներում չեն մոռացվի. «Ես նորանց տեղ եւ անուն պիտի տամ իմ տանն ու իմ պարիսպներումը, ասելի լաւ քան թէ որդիք եւ աղջկերք. եւ նորանց մի յաւիտեանական անուն [Յադ Վաշեմ] անուն կ'տամ, որ չի ջնջուիլ»: Հուշահամալիրը կառուցված է Երուսաղեմում, սիոնիզմի հիմնադիր Հերցելի անունը կրող լեռան և Զինվորական գերեզմանոցի մոտ, ինչը վկայում է այդ կառույցին տրվող իմաստի նշանակության մասին Իսրայելի համար:

Յադ Վաշեմը հիմնադրվել է 1953թ. Իսրայելի Կնեսետի որոշմամբ: Գործունեության սկզբնավորումից ի վեր Յադ Վաշեմին է վստահվել Հոլոքոստի տարիներին հրեա ժողովրդի պատմության վավերագրերի հավաքագրումը, վեց միլիոն զոհերից յուրաքանչյուրի մասին

կենսագրական տվյալների և հիշողության պահպանումը, հուշահամալիրի կազմում գտնվող արխիվների, գրադարանի, դպրոցի, թանգարանների միջոցով Հոլոքոստի ժառանգության մասին տվյալների հաղորդումը գալիք սերունդներին, ինչպես նաև Ազգերի միջից առաքինի անհատների ընտրության գործը: Համալիրն ընդարձակ, շուրջ 45 հա զբաղեցնող մի տարածք է, որտեղ հետիոտնի համար նախատեսված ծառուղիներն այցելուներին ուղղորդում են դեպի թանգարաններ, ցուցասրահներ, արխիվներ, հուշարձաններ, արձաններ և հուշային գործառույթ ունեցող այլ կառույցներ: Այցելուների համար մուտքն անվճար է, սակայն էքսկուրսիաների պարագայում պետք է ձեռք բերել նախնական պայմանավորվածություն, և այդ ծառայությունը վճարովի է: Եբրայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով ստեղծված է նաև աուդիո էքսկուրսիաների հնարավորություն: Տարեկան Յադ Վաշեմ է այցելում ավելի քան 2 մլն մարդ:

Յադ Վաշեմի կազմում է գտնվում Հոլոքոստի մասին նյութեր պարունակող աշխարհում ամենամեծ արխիվային հավաքածուն: Այն ձևավորվել է տասնամյակների ընթացքում և պարունակում է 62 մլն էջ տպագիր և անտիպ փաստաթղթեր, 267500 լուսանկարներ, հազարավոր ֆիլմեր և Հոլոքոստը վերապրածների տեսանկարահանումներ: Նյութերի մեծ մասը ենթակա է ազատ օգտագործման, ինչին են ուղղված նաև համապատասխան կահավորմամբ բաժանմունքները: Այսպես են պահվում Շոան վերապրողների կողմից Իսրայելում կամ այլ երկրներում տարբեր լեզուներով թելադրված, ձայնագրված կամ տեսանկարահանված տասնյակ հազարավոր վկայություններ: Վկայությունների երկրորդ տիպը՝ Վկայությունների էջերը (*Pages of Testimony*)՝ վերապրողների կամ զոհերի ազգականների կողմից լրացված հատուկ ձևակերպումներ են, որոնք պարունակում են տվյալներ անհատ զոհերի մասին, ինչպես, օրինակ, նրանց անուն-ազգանունը, ծննդյան վայրը և տարեթիվը, բնակության վայրը, մահվան վայրը, մահվան հանգամանքները և այլն: Շուրջ 2 մլն վկայություններ այս պահին թվայնացված են և մատչելի են հասարակությանը Շոայի զոհերի անունների տվյալների կենտրոնական էլեկտրոնային շտեմարանի (*Central Database of Shoah Victims' Names*) միջոցով, որտեղից, ընդհանուր առմամբ, կարելի է տվյալներ քաղել 3,2 մլն զոհերի մասին: Դեռևս չթվայնացված նյութերը դրանցով հետաքրքրվողների համար մատչելի են արխիվի աշխատակիցների օժանդակության շնորհիվ: Անտիպ փաստաթղթերը պարունակում են տվյալներ հրեաների ոչնչացմամբ զբաղվող նացիստական միավորումների մասին, ինչպես նաև հրեա մարդկանց նամակներ, անձնագրեր, օրագրեր և հուշագրություններ, հրեական կազմակերպությունների փաստաթղթեր, հրեաներից բռնագրավված արժեքների ցուցակներ, աքսորվածների, զոհերի և վերապրողների ցուցակներ, նացիստական հանցագործների ու նրանց հետ համագործակցողների նկատմամբ տարվող դատավարությունների նյութեր և այլն:

Հուշահամալիրի գրադարանում կան շուրջ 100 հազ. անուն գրքեր բազմաթիվ լեզուներով (գերազանցապես գերմաներեն, անգլերեն և եբրայերեն), 4 հազ. անուն թերթերի և ամսագրերի հավաքածուներ, ինչի շնորհիվ էլ այն դառնում է Հոլոքոստին նվիրված ամենամեծ գրադարանն աշխարհում: Գրադարանն ընթերցասրահ է ծառայում հուշահամալիրի այցելուների համար, իսկ Իսրայելի բնակիչները կարող են սահմանափակ քանակությամբ գրքեր վերցնել՝ տանն ընթերցելու նպատակով: Գրադարանում կան պատճենելու հնարավորություններ, սակայն գրադարանի կատալոգն առայժմ արտացոլված չէ համացանցում:

Անունների սրահը (*The Hall of Names*) հարգանքի տուրք է զոհերին նրանց ոչ թե որպես անանուն թվեր, այլ որպես անհատ մարդկային էակներ հիշելու ճանապարհով: Նույն կերպ և 1955թ. ի վեր աշխարհով մեկ հավաքվող «Վկայությունների էջերը» խորհրդանշական տապանաքարեր են, որոնք գրանցում են միլիոնավոր զոհերի ընտանիքի անդամների և ընկերների կողմից տրամադրված անունները և կենսագրական տվյալները: Անունների սրահի կոնաձև առաստաղին ներսի կողմից փակցված են Վկայությունների էջերի 600 լուսանկարներ և հատվածներ: Անունների սրահի վերջնամասում ապակյա էկրան է, որտեղ պրոյեկտվում են Վկայությունների էջերը: Այստեղ ամեն ոք կարող է սրահի աշխատակիցների օժանդակությամբ մուտք գործել համակարգիչ և որոնում կատարել Շոայի զոհերի անունների տվյալների կենտրոնական էլեկտրոնային շտեմարանում: Այստեղ, ինչպես նաև Յադ Վաշեմի բավական հանգամանալի կայքէջում կարելի է նաև ձեռք բերել Վկայությունների էջերի և վերապրողների գրանցման չլրացված ձևակերպումներ, ծանոթանալ դրանց լրացման կարգին:

Հուշահամալիրի տարածքում է գտնվում նաև 1993թ. հիմնված Հոլոքոստի ուսումնասիրությունների միջազգային դպրոցը (*The International School for Holocaust Studies*), որը նման բնույթի միակ հաստատությունն է աշխարհում: Այն ունի 17 դասասենյակներ, արդիական կահավորմամբ մուլտիմեդիա կենտրոն, ռեսուրսների և մանկավարժության կենտրոն, մեծ դասասրահ և շուրջ հարյուր մանկավարժներից բաղկացած անձնակազմ, որը տարվա կտրվածքով սպասարկում է ավելի քան 100 հազ. աշակերտների և երիտասարդների, 50 հազ. զինծառայողների: Ամեն տարի այստեղ են վերապատրաստվում հազարավոր մանկավարժներ ինչպես Իսրայելից, այնպես էլ աշխարհի տարբեր երկրներից: Մանկավարժների համար նախատեսված կուրսերը մատուցվում են ութ լեզուներով: Այստեղ են մշակվում Հոլոքոստի դասավանդման համար ուսումնական ծրագրեր, դասագրքեր, քարտեզներ, տեսաժապավեններ և այլ անհրաժեշտ նյութեր: Հուշահամալիրի կայքէջում տեղակայված է մանրամասն տեղեկատվություն կենտրոնի կողմից իրականացվող հետազոտական ծրագրերի, սեմինար-պարապմունքների, դասախոսությունների, գիտահետազոտական կրթաթոշակների, այլ նորությունների մասին:

Հոլոքոստի ուսումնասիրության միջազգային ինստիտուտը (*The International Institute for Holocaust Research*) համակարգում և օժանդակում է ազգային և միջազգային մակարդակներով տարվող ուսումնասիրությունները, կազմակերպում է գիտաժողովներ, սեմինարներ, հրատարակում է Հոլոքոստին նվիրված բազմաթիվ կարևոր ուսումնասիրություններ, այդ թվում հուշագրություններ, օրագրեր, պատմական հետազոտություններ, գիտական տարեգրքեր և նման բնույթի այլ աշխատանքներ: Նրանց հրատարակությունների թվում է 1957թ. սկսված «Յադ Վաշեմի ուսումնասիրություններ» մատենաշարը (*The Yad Vashem Studies*), որի շրջանակներում առ այսօր լույս տեսած 33 անգլերեն և եբրայերեն հատորները ներառում են հոդվածներ և ուսումնասիրություններ Հոլոքոստի ամեն հարցի շուրջ: Յադ Վաշեմը մինչ օրս եբրայերենով և անգլերենով հրատարակել է ավելի քան 200 գրքեր, որոնք իսրայելական հասարակությունում կազմում են Հոլոքոստին նվիրված գրականության ողնաշարը: Վերջին ժամանակներս ամեն տարի լույս է տեսնում 24 գիրք: Մասնավորապես, ԱՄՆ Նեբրասկայի համալսարանի հետ շարունակվում է «Հոլոքոստի ամբողջական պատմություն» (*The Comprehensive History of the Holocaust*) մատենաշարի (բաժանումն իրականացվում է ըստ երկրների) հրատարակման գործը:

Հոլոքոստի պատմության նոր թանգարանը (*The new Holocaust History Museum*), որ կառուցվում էր շուրջ տասը տարի և արժեցել է \$40 մլն, բացվել է 2005թ. մարտին և զբաղեցնում է ավելի քան 4200մ² գերազանցապես ստորգետնյա տարածք: Այստեղ ներկայացված է Շոայի պատմության իսրայելական մեկնաբանումը: Հոլոքոստի զոհերի հիշատակը 21-րդ դարում լավագույնս ներկայացնելու համար, ցուցադրությունում օրիգինալ, անձնական պատկանելության իրերի միջոցով շեշտադրում է արված անհատ զոհերի պատմություններին և վերապրողների վկայություններին: Նկատենք, որ մինչև 12 տարեկան երեխաների մուտքը թանգարանի տարածք արգելված է:

Արվեստի թանգարանը (*The Art Museum*) վկայություն է մարդկային ոգու հզորության և ներառում է Հոլոքոստի աննկարագրելի անբարենպաստ պայմաններում, ինչպես նաև պատերազմից հետո վերապրողների և արվեստագետների կողմից ստեղծված գեղարվեստական իրերի, նկարների ընտրանու հավաքածու:

Հիշողության սրահը (*The Hall of Remembrance*) վրանաձև կառույց է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին իրենց հարգանքի տուրքը մատուցելու անմեղ նահատակների հիշատակին: Հատակին փորագրված են Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայով մեկ ցրված մահվան և համակենտրոնացման ճամբարների անունները: Հավերժական կրակի առջև գտնվում է զոհերի աճյուններ պարունակող դամբարանը: Պաշտոնական անձանց այցելությունների ժամանակ այստեղ են կատարվում հուշային արարողություններ:

Երեխաների հուշահամալիրը (*Children's Memorial*) հարգանքի տուրք է Հոլոքոստի տարիներին սպանված մոտ 1,5 մլն երեխաների հիշատակին: Այստեղ երկար միջանցքի հայելապատ պատերին արտացոլվում է երեխաների հիշատակին վառվող հազարավոր մոմերի լույսը, իսկ խորքում հնչում է երաժշտություն, և բարձրաձայն թվարկվում են զոհված երեխա-

ների անունները: Համայնքների հովիտը (*The Valley of the Communities*) 1 հա տարածք զբաղեցնող հուշարձան է, որը փորված է բնական ժայռի մեջ: Այստեղ զանգվածեղ քարե պատերին փորագրված են ավելի քան 5 հազ. ոչնչացված և մի քանի մեծապես տառապած, սակայն կենդանի մնացած հրեական համայնքների անուններ:

Ազգերի միջից առաքինի անհատների ծառուղին և պարտեզը (*The Avenue and Garden of the Righteous Among the Nations*) ստեղծված են ի պատիվ այն ոչ հրեա մարդկանց, որոնք, առաջնորդվելով մարդասիրության սկզբունքներով, իրենց կյանքը վտանգի ենթարկելով, օգնել են հրեաներին Հոլոքոստի ժամանակ: Ծառուղու մեջ և եզրերին տնկված են 2000 ծառեր, որոնք խորհրդանշում են նոր կյանքի վերածնունդը: Ամեն ծառին կից հուշատախտակները ներկայացնում են հրեաների կողմից մշտապես հիշվելու պատվին արժանացած մարդկանց անունները ու պատերազմի տարիներին նրանց բնակության երկրները: Առ այսօր ավելի քան 18000 ոչ հրեաներ են Յադ Վաշեմի կողմից ճանաչված որպես ազգերի միջից առաքինի անհատներ, և նրանց բոլորի անունները՝ ըստ բնակության երկրների, փորագրված են պարտեզի պատերին: Հարցի շուրջ հավաքված են շուրջ 7500 վավերական պատմություններ: Նման անհատների որոշման գործընթացը՝ հատուկ հանձնաժողովի ուժերով, սկսվել է 1963թ. և շարունակվում է մինչ օրս: Հրատարակվում է Ազգերի միջից առաքինի մարդկանց հանրագիտարան: Մասնավորապես, ֆրանսերենով և անգլերենով հրատարակվել են հատորներ՝ նվիրված պատերազմի տարիներին Ֆրանսիայում հրեաներին օգնած մարդկանց, գերմաներենով՝ հատորներ՝ նվիրված այդ տիպի մարդկանց Գերմանիայում և Ավստրիայում: Երեք առանձին հատորներով անգլերեն լեզվով պատրաստ են հրատարակության աշխատանքներ Նիդեռլանդներում, Լեհաստանում և Բելգիայում հրեաներին օժանդակած մարդկանց մասին: Շուտով կհրատարակվեն նմանատիպ գրքեր Հունաստանում և Իտալիայում պատերազմի տարիներին հրեաներին փրկած մարդկանց մասին:

Բռնագաղթվածներին նվիրված հուշահամալիրը (*The Memorial to the Deportees*) անասուններ տեղափոխելու համար նախատեսված մեքենա է, որի նմաններով հազարավոր հրեաների տեղափոխում էին մահվան ճամբարներ: Այն տեղակայված է Երուսաղեմի անտառին նայող անդունդի եզրին և իրենով մարմնավորում է ինչպես վերահաս սոսկում, նույնպես և Հոլոքոստին հաջորդող վերածնունդ:

Յադ Վաշեմում տեղ են գտնում նաև ամենամյա երկու ավանդական հուշային արարողություններ: Դրանցից մեկը Հոլոքոստի նահատակների և հերոսների հիշատակի օրն է (*Holocaust Martyrs' and Heroes' Remembrance Day*): Այդպիսի օրվա սահմանման մասին որոշումն ընդունվել է 1953թ., Իսրայելի Կնեսետի կողմից և Հոլոքոստի հիշատակի օր է սահմանում հրեական Նիսան ամսվա 27-րդ օրը, որը սովորաբար համընկնում է ապրիլի վերջին կամ մայիսի սկզբին: Յադ Վաշեմում այն նշվում է հանդիսավոր պետական արարողությամբ Վարշավայի գետտոյի հրապարակում (*Warsaw Ghetto Square*), բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում և Իսրայելի նախագահի ու վարչապետի մասնակցությամբ: Արարողությանը ներկա են լինում նաև հասարակության ներկայացուցիչներ, սակայն անվճար տոմսերը պետք է ձեռք բերել նախօրոք: Հաջորդ առավոտյան նույն հրապարակում տեղի է ունենում ծաղկեպսակների դրման արարողությունը, որին հաջորդում է հատուկ ոգեկոչման ծես Հիշատակի սրահում: Այստեղ հասարակությունը հրավիրված է լինում ընթերցելու հրեական Հոլոքոստի գոհերի անունները: Նացիստական Գերմանիայի դեմ հակահիտլերյան դաշնության Եվրոպայում հաղթանակի օրը (*Victory in Europe day*) պետականորեն նշվում է մայիսի 8-9-ին Յադ Վաշեմի Հրեա զինվորների հուշահամալիրում (*Memorial to the Jewish Soldiers at Yad Vashem*): Արարողության հատուկ հյուրերն են պատերազմի վետերանները, ներկա են լինում նաև հասարակության ներկայացուցիչներ:

*Հարություն Մարության
«Նորավանք» հիմնադրամ*

Heritage lectures¹ №967

Предмет дискуссии

- Бывший заключенный советского ГУЛАГа, однажды спрошенный, кто был жертвой коммунизма, ответил: «Жертвами коммунизма были все, кто жил в XX столетии».
- Сегодня, спустя 50 лет после смерти Сталина, сохранившиеся коммунистические диктатуры, такие как Беларусь, Бирма, Китай, Куба и Северная Корея увековечили ленинское наследие страха и запугивания.
- По крайней мере, один аспект такого наследия непосредственно затрагивает каждого американца сегодня. СССР и его «proxies»² вооружали и создавали международные террористические сети с 1960-х по 1980-ые годы. Государства, поддерживающие международный терроризм, в основном являются режимами-сателлитами бывшего Советского Союза.

Если бы координируемые коммунистами террористы были бы подавлены или никогда не существовали, то, по всей вероятности, мир избежал бы проблем современного терроризма – Хизбаллы, *Хамаса*, *Аль-Каиды* и других вооруженных организаций, которые совершают массовые убийства под именем Всевышнего.

*Мертв ли коммунизм?*³

Ли Эдвардс, доктор философии, Фрэнк Калзон, Пол Гобл, Гарри Ву

Ли Эдвардс, доктор философии. Серьезным недостатком нашего времени является то, что еще не известен полный масштаб коммунистической негуманности к человеку.

Кто знает, что Советский Союз убил 20 миллионов людей через инсценированные судебные процессы, чистки, голод и печально известный ГУЛАГ?

Кто знает, что Мао Цзэдун и другие китайские коммунистические лидеры вырезали по приблизительной оценке 50 миллионов человек во время «Большого скачка» и «Культурной революции», резни на площади Тяньаньмэнь и китайской версии ГУЛАГа – Лаогай?

Кто знает, что Фидель Кастро казнил тысячи политических заключенных, начиная с прихода к власти в 1959 году, и продолжает усмирять любое открытое сопротивление его правлению?

Кто знает, что число жертв от коммунистической чумы превышает общее количество погибших во всех войнах 20-го столетия?

Это трагическое упущение должно быть исправлено. Мемориал более 100 миллионам жертв коммунизма должен быть и будет построен. Закладка этого памятника, расположенного на Капитолийском холме, непосредственно в трех кварталах отсюда, запланирована на следующий месяц. (*Закладка Мемориала была запланирована на 27-ое сентября 2006 года. – Прим. ред.*) Мемориал будет представлять точную бронзовую копию 10-футовой статуи Богини Демократии, установленной китайскими студентами на площади Тяньаньмэнь весной 1989 года и затем разрушенной танками китайских коммунистов. Идея Статуи опиралась на нашей Статуе Свободы в нью-йоркской гавани.

На фронтальной части пьедестала мемориальной статуи будут слова: «Посвящается более ста миллионам жертв коммунизма и тем, кто любит свободу».

На обратной стороне пьедестала будут слова: «Посвящается свободе и независимости всех поработанных наций и народов».

¹ Лекция прочитана 2 августа 2006 года. Материал опубликован *Фондом Наследие* (Heritage Foundation) 26-го сентября 2006 года.

² *Проху* - представитель, уполномоченный, доверенный.

³ Эта статья полностью размещена на сайте: www.heritage.org/research/worldwidefreedom/hl967.cfm

Ничего из написанного здесь не должно рассматриваться как неопременное отражение точки зрения *Фонда Наследия* или как попытка поддержки или препятствования прохождению какого-либо закона в Конгрессе США.

Эти слова станут напоминанием посетителям, что одна пятая населения мира все еще живет не по своей воле под диктатом коммунизма.

Вы и я благословенны жить в свободном обществе. Нам никогда не нужно было волноваться из-за стука в дверь посреди ночи и тайной полиции, вытаскивающей нас из нашего дома. Мы никогда не испытывали ужас так называемых лагерей перевоспитания, которые ломали тела и души диссидентов. Мы никогда не видели семьи, общины, целые города, уничтоженные по приказу хладнокровного тирана.

Однако для многих миллионов людей за последние столетия эти ужасы были повседневным фактом жизни.

Бывший заключенный советского ГУЛАГа, у которого как-то спросили, кто был жертвой коммунизма, ответил: «Каждый, кто жил в XX столетии, был жертвой коммунизма».

Как писала Энн Эпплбаум, лауреат Пулитцеровской премии, автор книги «*Гулаг*», простая статистика не может отразить «совокупного воздействия сталинских репрессий на жизнь и здоровье целых семей».

Примите во внимание, что человека судили и расстреливали как «врага народа». Его жену ссылали в лагерь как «члена семьи врага». Его дети росли в приютах и становились членами преступных банд. Его мать умирала от стресса и горя. Его родственники прерывали все контакты друг с другом для того, чтобы не быть запятнанными. Страх тяжело довлел над всеми оставшимися, даже если они не умирали.

Сегодня, спустя 50 лет после смерти Сталина, сохранившиеся коммунистические диктатуры увековечивают ленинское наследие страха и запугивания, о чем сегодня будут говорить выдающиеся участники нашей публичной дискуссии.

Есть один аспект ленинского наследия, на сегодня непосредственно затрагивающий каждого американца.

СССР и его «*proxies*» вооружали и создавали международные террористические сети с 1960-х по 1980-ые годы – это факт, документированный экспертом по терроризму Майклом Уоллером. Государства, поддерживающие международный терроризм, в основном режимы-сателлиты бывшего Советского Союза, включая Кубу, Северную Корею и Сирию под правлением семьи Ассад. Неоспоримым фактом является и то, что финансирование Советским Союзом Ясира Арафата и Организации освобождения Палестины позволили Москве получить влияние над террористическими группировками типа *Хизбаллы*.

Если бы координируемые коммунистами террористы были бы подавлены или никогда не существовали, заключает доктор М. Уоллер, то, по всей вероятности, мир избежал бы проблем современного терроризма – *Хизбаллы*, *Хамаса*, *Аль-Каиды* и других вооруженных организаций, которые совершают массовые убийства под именем Всевышнего.

Бесспорно, призрак коммунизма все еще бродит в мире – даже в крупнейшем городе Америки. Популярный ночной клуб в *East Village* Нью-Йорка – бар «КГБ». Заведение забито почти каждую ночь и особенно по воскресеньям, когда писатели читают отрывки из своих последних произведений под символом клуба – серпом и молотом. Интересно, как долго просуществовал бы нью-йоркский ночной клуб, если бы он назывался «Гестапо» и на стене была бы изображена большая свастика?

Очевидно, что есть настоятельная потребность в Мемориале жертвам коммунизма. И Вашингтон – правильный город для строительства такого Мемориала, так как в этом городе есть много напоминаний об истории нашей нации и мира.

В прошлом десятилетии мы наблюдали посвящение мемориального музея Холокосту евреев, а также мемориала ветеранам Второй мировой войны. Есть здесь и соответствующая дань уважения памяти мужчин и женщин, погибших в Корейской и Вьетнамской войнах.

Мемориал жертвам коммунизма станет ключевой частью этой исторической картины и поможет продемонстрировать, почему мы боролись и выиграли Холодную войну.

Посетители Мемориала вспомнят о венгерских патриотах, убитых советскими войсками и танками в 1956 году. Они вспомнят тех, кто больше четверти века боролся за избавление от бетона и колючей проволоки Берлинской стены. Они вспомнят храбрых «лодочников» Вьетнама и Кубы, тех, которые рисковали всем ради обретения свободы.

Мы не можем, мы не должны позволить истории забыть тех, кто погиб и все еще погибает при коммунистическом строе.

Наши еврейские братья и сестры осознают, что поставлено на карту. Они понимают, что историю не следует забывать, чтобы она не повторялась. Они продолжают напоминать миру о Холокосте, взывая: «Никогда снова!».

Как сказал лауреат Нобелевской премии мира Эли Визель на прошлой неделе здесь, в Вашингтоне: «Что является альтернативой? Не рассказывать об истории? Позволить правде исчезнуть? Позволить исчезнуть правде вместе с жертвами?» На подобные вопросы может быть только один ответ.

